

ՀՀ ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ  
ՄԵԿՆԱԲԱՆՈՂ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Սույն ուղեցույցի մշակումը և տպագրությունը հավանության է արժանացել ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից:

Ուղեցույցում ներկայացված պարզաբանումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնում գործող «Թեժ գծի» միջոցով հետևյալ հեռախոսահամարով՝  
(374 10) 56-37-14  
կամ հետևյալ էլեկտրոնային փոստի միջոցով՝  
[info@smednc.am](mailto:info@smednc.am)

Տեղեկագիրը նախատեսված չէ վաճառքի համար:

© ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, 2008

ԵՐԵՎԱՆ 2008



## Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն

Կենտրոնական գրասենյակ

հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Միեր Սկրտչյան 5<sup>ա</sup>  
 հեռախոս՝ (374 10) 58-32-61, 56-37-14, 54-16-48  
 ֆաքս՝ (374 10) 54-16-42  
 էլ. փոստ՝ info@smednc.am  
 կայք՝ www.smednc.am

<p>Արագածոտնի մարզ                  տնօրեն՝ Ռոբերտ Մակարյան                  հասցե՝ ՀՀ, Արագածոտնի մարզ,                  ք. Ապարան, 0301, Բաղրամյան 24                  հեռախոս/ֆաքս՝ (374 252) 2-51-94                  էլ. փոստ՝ aragatsotn@smednc.am</p>	<p>Կոտայքի մարզ                  տնօրեն՝ Հակոբ Ավալյան                  հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ,                  ք. Չարենցավան, 2501, 6-րդ թաղամաս, Խանջյան 22                  հեռախոս/ֆաքս՝ (374 226) 4-29-27                  ֆաքս՝ (374 226) 4-29-26                  էլ. փոստ՝ kotayk@smednc.am</p>
<p>Արարատի մարզ                  տնօրեն՝ Հովհաննես Սահակյան                  հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ,                  ք. Արտաշատ, 0701, Օգոստոսի 23/136<sup>ա</sup>                  հեռախոս/ֆաքս՝ (374 235) 2-39-22                  էլ. փոստ՝ ararat@smednc.am</p>	<p>Շիրակի մարզ                  տնօրեն՝ Արթուր Զաքարյան                  հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ,                  ք. Գյումրի, 3101, Գարեգին Նժդեհի 1/5                  հեռախոս՝ (374 312) 3-20-35                  ֆաքս՝ (374 312) 3-20-34                  էլ. փոստ՝ shirak@smednc.am</p>
<p>Արմավիրի մարզ                  տնօրեն՝ Վահրամ Պողոսյան                  հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ,                  ք. Արմավիր, 0901, Հանրապետության 5                  հեռախոս/ֆաքս՝ (374 237) 6-08-46                  էլ. փոստ՝ armavir@smednc.am</p>	<p>Սյունիքի մարզ                  տնօրեն՝ Սուրեն Խուրավերդյան                  հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,                  ք. Սիսիան, 3501, Գարեգին Նժդեհի 2                  հեռախոս՝ (374 10) 23-97-40, (374 2830) 63-39                  ֆաքս՝ (374 10) 23-97-40                  էլ. փոստ՝ syunik@smednc.am</p>
<p>Գեղարքունիքի մարզ                  տնօրեն՝ Արսեն Սարգսյան                  հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,                  ք. Սևան, 1501, Նաիրյան 155                  հեռախոս/ֆաքս՝ (374 261) 2-49-04                  էլ. փոստ՝ gegharkunik@smednc.am</p>	<p>Վայոց Ձորի մարզ                  տնօրեն՝ Վիգեն Գասպարյան                  հասցե՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ,                  ք. Վայք, 3801, Շահումյան 18                  հեռախոս/ֆաքս՝ (374 282) 2-17-70                  էլ. փոստ՝ vayotsdzor@smednc.am</p>
<p>Գավառի ներկայացուցչություն                  ներկայացուցիչ՝ Անուշ Հովհաննիսյան                  հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,                  ք. Գավառ, 1203, Գրիգոր Լուսավորչի 36                  հեռախոս/ֆաքս՝ (374 264) 2-30-15</p>	<p>Տավուշի մարզ                  տնօրեն՝ Գագիկ Ցուցուլյան                  հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ,                  ք. Իջևան, 4001, Աշոտ Մելիքբեկյան 5/7                  հեռախոս՝ (374 263) 3-44-58                  ֆաքս՝ (374 263) 3-44-72                  էլ. փոստ՝ tavush@smednc.am</p>
<p>Մարտունու ներկայացուցչություն                  ներկայացուցիչ՝ Սկրտչի Հակոբյան                  հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,                  ք. Մարտունի, 1402, Երևանյան 4                  հեռախոս/ֆաքս՝ (374 262) 4-68-29</p>	<p>Բերդի ներկայացուցչություն                  ներկայացուցիչ՝ Արմեն Առաքելյան                  հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ,                  ք. Բերդ, 4201, Լևոն Բեկի 8                  հեռախոս/ֆաքս՝ (374 267) 2-18-14</p>
<p>Վարդենիսի ներկայացուցչություն                  ներկայացուցիչ՝ Հովհաննես Սուրադյան                  հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,                  ք. Վարդենիս, 1603, Բարեկամության 4                  հեռախոս/ֆաքս՝ (374 269) 2-13-53</p>	<p>Նոյեմբերյանի ներկայացուցչություն                  ներկայացուցիչ՝ Հրայր Ամիրադյան                  հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ,                  ք. Նոյեմբերյան, 4101, Երևանյան 4                  հեռախոս/ֆաքս՝ (374 266) 2-24-28</p>
<p>Լոռու մարզ                  տնօրեն՝ Արտակ Թաթոյան                  հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ,                  ք. Ստեփանավան, 1901, Միլիոնի 70                  հեռախոս/ֆաքս՝ (374 256) 2-39-11                  էլ. փոստ՝ lori@smednc.am</p>	



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	«ՅԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	8
2.	«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	17
3.	«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	28
4.	«ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	38
5.	«ՊԱՐԶԵՅՎԱԾ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	46
6.	«ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	47
7.	«ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	48
8.	«ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	49
9.	«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	50
10.	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	51
11.	«ՀԱՄՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ	55



## ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ին կայացրած՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին», թիվ 1440 որոշման համաձայն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի ապրիլի 11-ի թիվ 188-Ա որոշմամբ հաստատված փոքր ձեռնարկատիրական գործունեության ոլորտում հարկային օրենսդրության և վարչարարության կատարելագործման նպատակով, ՀՀ կառավարությունը կատարեց որոշակի օրենսդրական փոփոխություններ, որոնց նպատակն է կարգավորել այժմյան տնտեսությունում առկա հարկային օրենսդրական թերություններն ու բացթողումները:

Նշենք այն առկա խնդիրները, որոնց անդրադարձել է կառավարությունը՝ կատարելով սույն ուղեցույցում պարզաբանված օրենսդրական փոփոխությունները.

1. Ներկայումս տնտեսությունում կատարվող ապրանքաշրջանառության մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն առանց հաշվարկային փաստաթղթերի ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման գործարքները, ինչը պայմանավորված է նաև առկա օրենսդրական դաշտում փաստաթղթաշրջանառությունը կարգավորող նորմերի կիրառության սահմանափակությամբ: Փաստաթղթաշրջանառության հետ կապված հիմնախնդիրների խորացմանը նպաստում է նաև առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու տնտեսական խթանների ու, միևնույն ժամանակ, հաշվարկային փաստաթղթեր դուրս չգրելու դեպքերում խիստ պատժամիջոցների բացակայությունը, ինչպես նաև գործարքների կատարման փաստն ապացուցելու համապատասխան մեխանիզմների սահմանափակ կիրառությունը:

2. Մինչ փոփոխությունը գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ավելացված արժեքի հարկ վճարողներ են համարվում ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեություն վարող և ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ իրականացնող անձինք, եթե նրանց օրենքով իրավասություն վերապահված չէ համարվելու պարզեցված հարկ կամ հաստատագրված վճար վճարողներ: Խնդիրը կայանում է նրանում, որ 2008 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների հետևանքով նախկինում պարզեցված հարկի դաշտում գործող հարկ վճարողների մի զգալի հատված տեղափոխվեց հարկման ընդհանուր դաշտ: Նշյալ օրենսդրական փոփոխությունները տնտեսավարող սուբյեկտների շրջանում հանգեցրեցին հարկային բեռի ծանրության՝ կապված ձեռքբերումները հիմնավորող փաստաթղթերի ապահովման, ապրանքային մնացորդների իրացման, ինչպես նաև կանխիկ վճարումների ձևով կատարված ծախսերում ներառված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման իրավունք չունենալու հետ, ինչպես նաև հանգեցրեցին հարկերի հաշվարկման, հաշվետվությունների կազմման և օրենքով սահմանված ժամկետներում ներկայացման դժվարությունների:



3. Մինչ փոփոխությունը գործող «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը իրացման շրջանառության փոքր ծավալներ ունեցող հարկ վճարողների համար շահութահարկի հաշվարկման, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման առումով տարբերակված մոտեցումներ չի սահմանում: Այն նման հարկ վճարողների համար հաշվապահական հաշվառման վարման առումով նույնպես առանձնահատկություններ չէր նախատեսում, ինչը հարկատուներից լրացուցիչ ֆինանսական ծախսեր կարող էր պահանջել օրենսդրության դրույթներին համապատասխան շահութահարկը հաշվարկելու համար:

4. Մինչ փոփոխությունը գործող «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը իրացման շրջանառության փոքր ծավալներ ունեցող անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի հաշվարկման, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման առումով տարբերակված մոտեցումներ չէր սահմանում, ինչը հարկատուներից լրացուցիչ ֆինանսական ծախսեր կարող էր պահանջել օրենսդրության դրույթներին համապատասխան եկամտահարկը հաշվարկելու համար:

5. Մինչ փոփոխությունը պարզեցված հարկի դաշտից դուրս են եկել իրացման շրջանառության ոչ մեծ ծավալներ ունեցող հարկ վճարողների մի մեծ մաս և այս հարկատեսակը շարունակում է գործել հիմնականում առևտրական գործունեության և կենցաղային ծառայությունների ոլորտում: Առկա խնդիրն էր՝ կարգավորել պարզեցված հարկման դաշտից դուրս մնացած հարկ վճարողների հարկային բեռի և հարկի հաշվարկման բարդությունների հետ կապված խնդիրները և մյուս փոքր հարկ վճարողների համեմատությամբ ձևավորել հարկման համահավասար պայմաններ:

6. Մինչ փոփոխությունը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը, անկախ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու կամ չհամարվելու, կամ եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարող համարվելու հանգամանքից, պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկում և վճարում են միևնույն ընթացակարգով: Խնդիրը կայանում էր նրանում, որ գործնական փորձը ցույց է տալիս, որ իրացման շրջանառության ոչ մեծ ծավալներ ունեցող անհատ ձեռնարկատերերի (հատկապես նրանց, ովքեր դուրս են եկել պարզեցված հարկի դաշտից) համար սոցիալական վճարի 15 և 5 տոկոս ռեգրեսիվ դրույթաչափերը բարձր են, ինչը հանգեցրել էր բավականին թվով անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարեցման:

7. Մինչ փոփոխությունը գործող «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարումից ազատելու արտոնությունը տարածվում է միայն մինչև 2006 թվականի մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած և պետական գրանցման վկայականը (այդ թվում՝ ժամկետային) հանձնած անհատ ձեռնարկատերերի վրա: Խնդիրը կայանում է նրանում, որ անհատ ձեռնարկատերերի մի մասը վերոնշյալ օրենքում նշված ժամկետում չի դիմել օրենքով սահմանված արտոնությունից օգտվելու համար:



8. Մինչ փոփոխությունը գործող «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար նախատեսված են համեմատաբար մեղմ պատասխանատվության միջոցներ, որոնց կիրառությամբ հնարավոր չէ արդյունավետ վերահսկողություն սահմանել հարկ վճարողների կողմից նշյալ կանոնների պահպանման ուղղությամբ:

9. Մինչ փոփոխությունը գործող «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն, օրենքի գործողությունը տարածվում է բոլոր կազմակերպությունների վրա: Խնդիրը կայանում է նրանում, որ փոքր սուբյեկտների կողմից ներկայումս գործող հաշվապահական հաշվառման ստանդարտների հիման վրա հաշվապահական հաշվառում վարելը դժվար իրագործելի խնդիր է, քանի որ այն պահանջում է մասնագիտական գիտելիքների բավարար մակարդակ ունեցող կադրերի ներգրավում, հետևաբար նաև՝ լրացուցիչ վարչական ծախսերի իրականացում:



## 1. «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ

Կատարվել են փոփոխություններ նշված օրենքի 12, 15, 20, 28, 30, 31 հոդվածներում, ինչպես նաև ավելացվել են 22<sup>1</sup>, 28<sup>4</sup>, 28<sup>5</sup> և 28<sup>6</sup> հոդվածները: Սույն ուղեցույցով մենք կաշխատենք պարզաբանել կատարված փոփոխությունները հետևյալ սկզբունքով. սկզբունքներ կայացնենք մինչ փոփոխությունը գործող օրենսդրական ակտը որոշակի մեկնաբանություններով, որից հետո կներկայացնենք փոփոխությունը և նրա հետևանքները.

### ՀՈԴՎԱԾ 12

#### ՆԱԽԿԻՆՈՒՄ

ՀՀ-ում սահմանվում են հարկերի հետևյալ տեսակները՝

- շահութահարկ,
- եկամտահարկ,
- ակցիզային հարկ,
- ավելացված արժեքի հարկ,
- գույքահարկ,
- հողի հարկ.

Օրենքով կարող են սահմանվել վերոհիշյալ հարկատեսակներին փոխարինող հաստատագրված վճարներ կամ պարզեցված հարկեր:

#### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ըստ նախկինում գործող օրենքի ՀՀ-ում սահմանված են հարկատեսակներ, որոնց մեջ ուղղակի հարկերից են հետևյալ հարկատեսակները՝ շահութահարկ, եկամտահարկ, գույքահարկ, հողի հարկ, անուղղակի հարկերից հետևյալ հարկատեսակները՝ ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ: Ինչպես նաև շահութահարկին և ԱԱՀ-ին փոխարինող (իրավաբանական անձանց համար) և եկամտահարկին և ԱԱՀ-ին փոխարինող (ֆիզիկական անձանց համար) հաստատագրված վճար կամ պարզեցված հարկ:

#### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» ՀՀ 14.04.1997թ. ՀՕ-107 օրենքի (այսուհետ Օրենք) 12 թդ հոդվածում հանել «կամ պարզեցված հարկեր» բառերը:

#### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանի որ 2009թ.-ի հունվարի 1-ից պարզեցված հարկի մասին ՀՀ օրենքը ուժը կորցնում է, այսինքն՝ որպես հարկատեսակ պարզեցված հարկը գոյություն չի ունենալու, հետևաբար սույն օրենքում նույնպես հանվում է այդ հարկատեսակը:





Հարկ վճարողը պարտավոր է՝

զ) սահմանված ժամկետներում հարկային տեսչություն ներկայացնել (մասնավորապես ըստ պատկանելության հանձնել կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով) հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ.

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ըստ նախկինում գործող օրենքի հարկ վճարողները հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և տեղեկությունները պարտավոր էին ներկայացնել հարկային տեսչություն առձեռն կամ կառավարության սահմանած կարգով ուղարկել փոստով:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածում՝

ա) «զ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ) սահմանված ժամկետում հարկային տեսչություն ներկայացնել (մասնավորապես՝ ըստ պատկանելության հանձնել կամ ուղարկել փոստով կամ ներկայացնել էլեկտրոնային համակարգով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով) հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ.».

բ) լրացնել նոր «թ» կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ) իր գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում՝ առավել տեսանելի տեղում փակցնել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ նշելով հարկ վճարողի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը), հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության տվյալ վայրի հասցեն և տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները).».

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխության

1) «ա» կետի համաձայն կատարվել է իրավապես առավել ճշգրիտ ձևակերպում՝ տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն է տրվում հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկությունները հարկային տեսչություն ներկայացնել ոչ միայն առձեռն կամ էլեկտրոնային համակարգով, այլև փոստով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

2) «բ» կետի համաձայն հարկ վճարողը պարտավոր է իր գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում՝ առավել տեսանելի տեղում փակցնել հարկային մարմնի կողմից սահմանած ձևի հայտարարություն՝ նշելով հարկ վճարողի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը), հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության տվյալ վայրի հասցեն և տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները): Այս փոփոխության նպատակն այն է, որ երբ տնտեսվարող սուբյեկտը, օրինակ գնորդը, իր կողմից ձեռք բերված ապրանքի համար պահանջում է փաստաթուղթ (հաշիվ ապրանքագիր կամ այլ հաշվարկային փաստաթուղթ), իսկ մատակարարը հրաժարվում է այն տրամադրելուց, ապա գնորդը կարող է տեսանելի տեղում փակցված հայտարարությունից վերցնել անհրաժեշտ տեղեկությունները մատակարարի մասին և կազմել միակողմանի հաշիվ ապրանքագիր: Ասեմք, գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում առավել տեսանելի տեղում հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն չփակցնելու համար նախատեսվում է տուգանք. 50 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր հասցեում չփակցրած տեղեկության մասով, իսկ խախտումն արձանագրելու հաջորդող մեկ տարվա ընթացքում նշված տեղեկությունները չփակցնելու կրկնական փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չփակցրած տեղեկության մասով 500 հազար դրամի չափով (սույն փոփոխության օրենքի Հոդված 4)



### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հողված 20. Իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները և անհատ ձեռներեցները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են հարկային տեսչություն տեղեկություններ հաղորդել հարկ վճարողների հետ կատարված գործառնությունների, ինչպես նաև իրենց կողմից և իրենց հաշվին ֆիզիկական անձանց վճարված եկամուտների և պահված հարկերի, հարկման նպատակով անհրաժեշտ տվյալների մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Բանկային և առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային տեսչությանը տրամադրվում են օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցում (լիցենզավորում) իրականացնող լիազորված մարմինները դրանց գրանցման (լիցենզավորման), ինչպես նաև դրանց հետ կապված համապատասխան փոփոխությունների մասին տվյալներ են հայտնում հարկային տեսչություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Հարկ վճարողները պարտավոր են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ցանկում ընդգրկված ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզիկական շաղկապների, ինչպես նաև իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնել հարկային մարմիններ:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հողված 3. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Հայաստանի Հանրապետությունում արտադրվող US4 ԱՍ 2009, 2201, 2202, 2203 ծածկագրերին դասվող ապրանքների արտադրության ծավալների հաշվառումը իրականացվում է համապատասխան ծախսաչափային հանգույցների (ներառյալ՝ հաշվիչների, այսուհետ՝ ծախսաչափային հանգույցներ) միջոցով: Ծախսաչափային հանգույցները տեղադրվում են այդ ապրանքների արտադրության և լցման համապատասխան հոսքագծերի վրա: Ծախսաչափային հանգույցների վերաբերող չափագիտական կանոնները և նորմերը, հոսքագծերի վրա դրանց տեղադրման տեղը, տեղադրման ու կապարակման կարգերը, ինչպես նաև շահագործման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Արտադրված ապրանքների ծավալների մասին ծախսաչափային հանգույցի տվյալները դուրս են բերվում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար, որն արձանագրվում է հարկային մարմնի և հարկ վճարողի ներկայացուցիչների համատեղ ակտով:»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն այս նոր կետի ուժեղացվում է ՀՀ տարածքում արտադրվող US4 ԱՍ 2009- Մրգահյութեր (ներառյալ խաղողահյութը) և բանջարեղենի հյութեր, չխմորված և սպիրտ չավելացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած., 2201 - Ջրեր, ներառյալ բնական կամ արհեստական հանքային ջրերը, գազավորած, առանց շաքար կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելումով. սառույց և ձյուն., 2202 - Ջրեր, ներառյալ հանքային և գազավորած ջրերը, շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելումներով, և այլ ոչ ալկոհոլային խմիչքներ՝ բացառելով 2009 ապրանքային դիրքի մրգահյութերն ու բանջարեղենային հյութերը., 2203 - Գարեջուր ծածկագրերին դասվող ապրանքների արտադրության ծավալների հաշվառման վերահսկողությունը՝ արտադրության հոսքագծերի վրա հատուկ հաշվիչներն տեղադրելու միջոցով:

### Նախկինում չի եղել

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22<sup>1</sup>-րդ հոդվածով.

«Հոդված 22<sup>1</sup>. ԱԱՀ (կամ դրան փոխարինող հաստատագրված վճար) վճարողների (այսուհետ, սույն հոդվածի իմաստով՝ հարկ վճարողների) կողմից արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկային մարմիններին ներկայացված հաշվետվությունների, ներառյալ՝ դրանց համար հիմք հանդիսացած հաշվապահական, արտադրատեխնոլոգիական փաստաթղթերի և այլ ներքին հաշվառման տվյալների (այսուհետ՝ հաշվետվություններ) և վերջիններիս մոտ օրենքով սահմանված կարգով իրականացված չափագրումների արդյունքների միջև էական շեղումների (տարբերությունների) առկայությունը սույն օրենքի 22-րդ հոդվածի իմաստով դիտարկվում է որպես հարկվող օբյեկտների հաշվառման սահմանված կարգի կոպիտ խախտում:

Սույն հոդվածի կիրառման իմաստով էական շեղում (տարբերություն) է համարվում չափագրումների արդյունքում արձանագրված արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) և հարկ վճարողի կողմից հարկային մարմիններին ներկայացված հաշվետվությունների համապատասխան տվյալների միջև 20 և ավելի տոկոսի (իսկ օգտակար հանածոների արդյունահանման ֆիզիկական ծավալների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված համապատասխան չափի) տարբերությունը:

Հարկ վճարողների կողմից ներկայացված հաշվետվությունների տվյալների և վերջիններիս մոտ օրենքով սահմանված կարգով իրականացված չափագրումների արդյունքների միջև էական շեղման (տարբերության) առկայության դեպքում ստուգվող ժամանակահատվածի համար հարկ վճարողի հարկային պարտավորությունները օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվում են չափագրումների արդյունքներով արձանագրված տվյալների (ներառյալ՝ ծախսերի և կորուստների) հիման վրա հաշվարկված արտադրության և շրջանառության ծավալների նկատմամբ: Չափագրումների արդյունքում արձանագրված տվյալների հիման վրա հարկային մարմինների կողմից հարկ վճարողների հարկային պարտավորությունները հաշվարկելիս հաշվի են առնվում նաև սովորաբար տվյալ ոլորտի գործունեության տեսակի համար դիտարկվող համադրելի (համարժեք) ժամանակահատվածի հիմնական գործոնների ազդեցությունը՝ խելամիտ աստիճանի ջանքերի ներդրմամբ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում: Սույն հոդվածով սահմանված կարգը հարկային պարտավորությունների հաշվարկման առումով չի կիրառվում տարվա ընթացքում գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած այն հարկ վճարողների վրա, որոնք նախապես այդ մասին տեղեկացրել են հարկային տեսչությանը՝ նշելով գործունեության ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածը (սկիզբը և ավարտը): Նշված դեպքում սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է միայն գործունեության իրականացման ժամանակահատվածի նկատմամբ:»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածով սահմանվել է պատասխանատվություն այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնց կողմից հարկային և այլ պետական կառավարման մարմիններին ներկայացված հաշվարկների և հաշվետվությունների մեջ ներառված տվյալները (զումարը, ֆիզիկական ծավալները, քանակը և այլն) չեն համապատասխանում այդ սուբյեկտների մոտ իրականացված չափագրումների արդյունքում արձանագրված տվյալներին և այդ շեղումը գերազանցում է 20%-ը: Այսինքն՝ թվային արտահայտությամբ սահմանվել է «էական շեղում» հասկացողությունը, որն, ի դեպ, նախկինում սահմանված չէր: Ինչպես նաև սահմանվում է, որ այդպիսի դեպքերում տնտեսվարող սուբյեկտի հարկային և այլ պարտադիր վճարների հաշվարկման համար հիմք են հանդիսանում չափագրմամբ արձանագրված ծավալները:



### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Գնորդի պահանջով մատակարարվող ապրանքների, մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների գործարքների համար հաշվարկային փաստաթուղթ (այդ թվում եկամուտները, ծախսերը հիմնավորող կամ հարկային հաշիվ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս չգրելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված հսկիչ գնումների հիման վրա, կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝

եթե այդ գործարքների լրիվ արժեքով հատուցման գումարը կազմում է մինչև մեկ միլիոն դրամ՝ 150 հազար դրամի չափով,

եթե այդ գործարքների լրիվ արժեքով հատուցման գումարը կազմում է մեկ միլիոն դրամ և ավելի՝ այդ գործարքների լրիվ արժեքով հատուցման գումարի 25%-ի չափով:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն կետով սահմանվում էր պատասխանատվություն՝ գնորդի պահանջով մատակարարի կողմից հաշվարկային փաստաթուղթ չտրամադրելու համար:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 5. Օրենքի 28-րդ հոդվածում ուժը կորցրած ճանաչել նախավերջին մասը:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանի որ սույն օրենքում ավելացվել են նոր հոդվածներ (28<sup>4</sup>, 28<sup>5</sup> և 28<sup>6</sup>), որոնք սահմանում են նոր պատասխանատվություն՝ հաշվարկային փաստաթուղթ չտրամադրելու համար կամ երկկողմանի չկազմելու համար, այդ պատճառով սույն հոդվածը ուժը կորցրած է ճանաչվել:



Հողված 6. Օրենքի 28<sup>3</sup> հոդվածից հետո լրացնել նոր՝ 28<sup>4</sup>, 28<sup>5</sup> և 28<sup>6</sup> հոդվածներ՝ հետևյալ խմբագրությամբ՝

«Հողված 28<sup>4</sup>. ՀՀ տարածքում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման աշխատանքների կատարման գործարքների համար երկկողմանի հաշվարկային փաստաթուղթ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս չգրելու դեպքում (այդ թվում՝ գնորդի պահանջով) ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող, աշխատանքներ կատարող կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից, ինչպես նաև այդպիսի ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ ձեռք բերած կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող վարձու աշխատանքի դեպքերի) գանձվում է՝ տուգանք՝ այդ գործարքների լրիվ արժեքով հատուցման գումարի 20%-ի չափով, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

Սույն հոդվածով սահմանված տուգանքը չի կիրառվում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման գործարքների կողմ հանդիսացող այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ, որոնք՝

- ա) իրականացրել են յուրաքանչյուր միանվագ գործարքի մասով 150.0 հազար դրամը, իսկ այդպիսի գործարքների հանրագումարով ամսական 1.5 մլն դրամը չգերազանցող ձեռքբերումներ, կամ
- բ) այդ գործարքների համար որպես հաշվարկային փաստաթուղթ տրամադրել կամ ստացել են հսկիչ-դրամարկային մեքենաների կտրոններ կամ կրճատ հաշիվ ապրանքագրեր, կամ
- գ) որոնց մոտ առկա չեն այդ գործարքների համար դուրս գրված կամ ստացված հաշվարկային փաստաթղթերը, սակայն առկա այլ փաստաթղթերը (մասնավորապես, հաշվարկային փաստաթղթերի պատճենները, հարկային հաշիվների վերաբերյալ երկկողմանի ներկայացված տեղեկությունները) բավարար են պարզելու, որ այդպիսի փաստաթղթերը դուրս են գրվել կամ ստացվել, կամ
- դ) ապրանքներ մատակարարելիս, ծառայություններ մատուցելիս կամ աշխատանքներ կատարելիս օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դուրս են գրել հաշվարկային փաստաթղթերը՝ նշելով իրենց տվյալները, սակայն գնորդը հրաժարվել է ստանալ հաշվարկային փաստաթուղթը, որի վերաբերյալ հաշվարկային փաստաթղթում կատարվել է համապատասխան նշում կամ
- ե) ՀՀ կառավարության սահմանած կարգով և ձևով այդ գործարքների կատարմանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմիններին տեղեկություններ են ներկայացրել առանց երկկողմանի հաշվարկային փաստաթղթերի (բացառությամբ սույն մասի «ա» կետով սահմանված դեպքի) ՀՀ տարածքում ապրանքների ձեռքբերման, ծառայությունների կամ աշխատանքների ստացման գործարքների վերաբերյալ, և որը հիմնավորվել է տեղեկությունների ներկայացման օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմինների կողմից երրորդ անձի միջոցով կատարված հսկիչ գնումների արդյունքում:

Սույն հոդվածին համապատասխան՝ հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ներառման ենթակա են նաև այն հաշվարկային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկությունները, որոնցում նշված գործարքները կատարվել են սույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված էական պայմաններից տարբերվող պայմաններով, որը սահմանված կարգով հիմնավորվելուց հետո հինք է հանդիսանում նաև սույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով և չափերով պատասխանատվության կիրառման համար:

Սույն հոդվածին համապատասխան իրականացված հսկիչ գնումների արդյունքների մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է հարկ վճարողին:

Հողված 28<sup>5</sup>. Սույն օրենքի 15-րդ հոդվածի «թ» կետով նախատեսված տեղեկությունները չփակցնելու դեպքում առևտրային կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք 50 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր հասցեում չփակցած տեղեկության մասով, իսկ խախտումն արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում նշված տեղեկությունները չփակցնելու կրկնական փաստ արձանագրվելու դեպքում, գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չփակցած տեղեկության մասով 500 հազար դրամի չափով:»:

Հողված 28<sup>6</sup>. Հայաստանի Հանրապետությունում ԱՏԳ ԱԱ 2009, 2201, 2202, 2203 ծածկագրերին դասվող ապրանքատեսակների արտադրությունը առանց սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված ծախսաչափային հանգույցների իրականացնելու դեպքում արտադրողից գանձվում է տուգանք՝ առանց ծախսաչափային հանգույցի արտադրություն կազմակերպելու ժամանակաշրջանի համար հաշվարկվող հաշվարկային շրջանառության 25 տոկոսի չափով: Տուգանքի կիրառման նպատակով հաշվարկային շրջանառությունը որոշվում է որպես առանց ծախսաչափային հանգույցի արտադրությունը կազմակերպելու ժամանակաշրջանում աշխատանքային գրաֆիկով աշխատանքային ժամերի թվի, հոսքային զծի առավելագույն ժամային արտադրողականության և այդ ժամանակաշրջանում կիրառված՝ միավոր արտադրանքի բացողման միջին գնի արտադրյալ:

Ծախսաչափային հանգույցների շահագործման կանոնները խախտելու համար ԱՏԳ ԱԱ 2009, 2201, 2202, 2203 ծածկագրերին դասվող ապրանքատեսակներ արտադրողներից գանձվում է տուգանք՝ մեկ միլիոն դրամի չափով:»:



Սույնով սահմանվել են պատժամիջոցներ այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք գործարքների փաստաթղթավորում չեն կատարում: Այսպես, օրինակ, երբ մատակարարը ապրանք է մատակարարում և փաստաթուղթ (հաշիվ) չի տրամադրում, ապա նա կտուգանվի գործարքի արժեքի 20%-ի չափով: Այդ չափով կտուգանվի նաև գնորդը: Օրինակ, ենթադրենք մատակարարվել է 1 մլն դրամի ապրանք և համապատասխան փաստաթղթավորում չի կատարվել: Այդ դեպքում թե գնորդը և թե մատակարարը տուգանվելու են յուրաքանչյուրն իր հերթին 200.0 հազարական դր.:

Սակայն սահմանվել են նաև բացառություններ օրինապահ և բարեխիղճ հարկատուների համար, մասնավորապես այն դեպքերում, երբ մատակարարը դուրս է գրում հաշիվ, սակայն գնորդը հրաժարվում է կամ հակառակը՝ գնորդը պահանջում է փաստաթուղթ, իսկ մատակարարը հրաժարվում է այն տրամադրելուց: Այդ բացառությունները նկարագրված են «ա» - «ե» կետերում:

Սույնպես, սահմանվել են պատժամիջոցներ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «թ» ենթակետի պահանջների չպահպանման համար՝ այն է գործունեության վայրում տնտեսվարող սուբյեկտի անվանման, ՀՎՀՀ-ի, հասցեի և գործունեության ոլորտի(ների) մասին սահմանված ձևի հայտարարություն չփակցնելը, և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի վերջին արբերությամբ նախատեսված ապրանքների արտադրության ժամանակ հաշվիչներ չտեղադրելու կամ շահագործման կանոնները խախտելու համար:

### Օրինակներ

#### հոդված 28<sup>4</sup> ա կետ

«Վուդ» ՍՊԸ-ն առանց հիմնավորող փաստաթղթերի միանվագ ձեռք է բերել 118 հազ դրամի ապրանք: Այդ դեպքում նրա նկատմամբ տուգանք չի կիրառվի, քանի որ այս միանվագ ձեռք բերման գումարը փոքր է 150 հազ դրամ:

«Վուդ» ՍՊԸ-ն առանց հիմնավորող փաստաթղթերի միանվագ ձեռք է բերել

ա) հունիսի 4-ին 142 հազ.դր. ապրանք

բ) հունիսի 7-ին 161 հազ.դր. ապրանք:

Այս դեպքում

ա) ձեռք բերման նկատմամբ տուգանք չի կիրառվի

բ) ձեռք բերման համար տուգանք կկիրառվի՝  $161,0 \text{ հազ. դր.} \times 20\% = 32,2 \text{ հազ.դր.}$

«Վուդ» ՍՊԸ-ն ամսվա ընթացքում առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռք է բերել ապրանքներ: Յուրաքանչյուր ձեռք բերման ապրանքագրի արժեքը չի գերազանցել 150,0 հազ. դր.: Սակայն ամսվա ընթացքում ձեռք բերումների ընդհանուր արժեքը կազմել է 2 մլն դր., ընդ որում ժամանակագրական առումով վերջին ձեռք բերումները եղել են 140,0 հազ. դր., 130,0 հազ. դր., 80,0 հազ. դր., 90,0 հազ. դր. և 150,0 հազ. դր., ընդհանուր գումարով 590,0 հազ. դր.: Սրանք այն գումարներն են, որոնց արդյունքում ամսվա ընթացքում ընդհանուր ձեռք բերումների գումարը գերազանցում է 1,5 մլն: Այս դեպքում, քանի որ  $2 \text{ մլն} > 1,5 \text{ մլն-ից}$ , ապա «Վուդ» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվի տուգանք 20% այն գումարների նկատմամբ, որոնց պատճառով ընդհանուր ձեռքբերումներով գումարը գերազանցել է 1,5 մլն դրամը: Այսինքն  $590,0 \text{ հազ. դր.} \times 20\% = 118,0 \text{ հազ. դր.}$

#### հոդված 28<sup>4</sup> բ կետ

«Արգամ» ՍՊԸ-ն «Բուլի» ՍՊԸ-ից ստացել է կրճատ հաշիվ ապրանքագիր: Այդ դեպքում տուգանք չի կիրառվի:

#### հոդված 28<sup>4</sup> դ կետ

«Ջառո» ՓԲԸ-ն անհատ ձեռնարկատեր Վ. Սրտակերյանին ապրանք է մատակարարել 200,0 հազ.դր. արժեքով և սահմանված կարգով դուրս է գրել հաշվարկային փաստաթուղթ: Սրտակերյանը հրաժարվում է ստանալ հաշիվ-ապրանքագիրը: Եթե «Ջառո» ՓԲԸ-ն հաշիվ-ապրանքագրում նշում է կատարում գնորդի հրաժարման մասին, այդ դեպքում տուգանք չի կիրառվում «Ջառո» ՓԲԸ-ի նկատմամբ:



# ՊԱՐԶԵՅՎԱԾ ՈՒՂԵՅՈՒՅՑ

## ՀՈԴՎԱԾ 30 ՎԵՐՋԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հարկային մարմինները ՀՀ կառավարության սահմանած ձևով և կարգով, ցանկերի տեսքով հրապարակում են տեղեկատվություն՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ առաջին 300 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով, իսկ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով տեղադրվում են հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 7. Օրենքի 30-րդ հոդվածի վերջին պարբերությունում «աճողական կարգով» բառերից հետո լրացնել «, ավելացված արժեքի հարկ վճարող համարվողների հարկ վճարողի հաշվառման համարները և անվանումները:»

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխության արդյունքում հարկային մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով, ցանկերի տեսքով մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը հրապարակում են տեղեկատվություն, որտեղ նշվում են նաև առաջին 1000 խոշոր ավելացված արժեքի հարկ վճարող համարվողների ՀՎՀՀ-ները և անվանումները:

## ՀՈԴՎԱԾ 31 ՎԵՐՋԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Փաստաթղթերը չեն համարվում անապրանք, և սույն հոդվածով նախատեսված պատասխանատվությունը չի կիրառվում, եթե անձն ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն կրում է գործարքը կատարելու պարտավորություն:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 8. Օրենքի 31-րդ հոդվածի վերջին պարբերությունում «պարտավորություն» բառից հետո լրացնել «կամ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռքբերող անձը սույն օրենքի 28<sup>4</sup>-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմիններին ներկայացրել է տեղեկություններ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքի մասին, որը սահմանված կարգով հիմնավորվել է հարկային մարմինների կողմից» բառերը:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանի որ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված է պատասխանատվություն անապրանք փաստաթղթեր դուրս գրելու համար, և քանի որ 28<sup>4</sup>-րդ հոդվածով սահմանված են բացառություններ հարկային մարմիններ տեղեկություններ ներկայացնելու վերաբերյալ, ապա այս հոդվածով տուգանքից ազատվում են նաև ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռքբերող անձիք, որոնք սույն օրենքի 28<sup>4</sup>-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմիններին ներկայացրել են տեղեկություններ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքի մասին, որը սահմանված կարգով հիմնավորվել է հարկային մարմինների կողմից:



## Ուժի Մեջ ՄՏՆԵԼԸ

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1 ից, բացառությամբ այն հոդվածների և դրույթների, որոնց կիրառման համար սույն հոդվածով այլ ժամկետ է սահմանված:

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված տուգանքները կիրառվում են՝ սկսած ՀՀ կառավարության կողմից նույն հոդվածով սահմանված տեղեկությունների ներկայացման ձևը և կարգը հաստատելու վերաբերյալ ընդունած որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից:
3. Օրենքի 28<sup>6</sup>-րդ հոդվածը կիրառվում է 2010 թվականի հունվարի 1-ից:





## 2. «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԶԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԶՅ ՕՐԵՆՔԸ

Կատարվել են փոփոխություններ նշված օրենքի 2, 3, 6, 8, 23, 24<sup>1</sup>, 26, 32, 43<sup>1</sup> հոդվածներում:

### ՀՈԴՎԱԾ 2

#### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հոդված 2. ԱԱՀ վճարողներ են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և սույն օրենքի 6 հոդվածում թվարկված գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները (այսուհետ՝ անձինք):

Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց:

ՀՀ և օտարերկրյա այն քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ ֆիզիկական անձինք), ովքեր գործատուների հետ կնքված պայմանագրերի համաձայն հանդիսանում են վարձու աշխատողներ և միաժամանակ չեն իրականացնում սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով սահմանված գործարքներ (գործառնություններ) ԱԱՀ վճարող չեն հանդիսանում:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանցից սույն օրենքով և ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով գանձվում է ԱԱՀ Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքներ ներմուծելիս, եթե նրանց կողմից ներմուծվող ապրանքների քանակը կամ արժեքը գերազանցում է օրենքով սահմանված չափերը:

#### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի համաձայն ԱԱՀ վճարողներ են համարվում ինքնուրույն տնտեսական գործունեություն վարող և ապրանքների մատակարարում իրականացնողները, ծառայությունների մատուցում կատարողները (այդ թվում՝ նաև ապրանքների և անշարժ գույքի վարձակալության գործարք կատարողները), անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառում իրականացնողները, «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծում իրականացնողները, բացառությամբ այդ օրենքով սահմանված դեպքերի: Ինչպես նաև սահմանվում են այն դեպքերը, թե ովքեր չեն համարվում ԱԱՀ վճարողներ:

#### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ 16.06.1997թ. ՀՕ-118 օրենքի (այսուհետ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում «(այսուհետ՝ անձինք)» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածով և սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դեպքերի» բառերը:

#### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ըստ էության սույն փոփոխությամբ վերացվում են 2 հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունների և ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունները



## ՀՈԴՎԱԾ 3 մաս1 ,մաս 2

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հոդված 3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գործարքներ իրականացրած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը համարվում են ԱԱՀ վճարող՝

- եթե նրանք օրենքի համաձայն չեն համարվում պարզեցված հարկ վճարողներ (ներառյալ՝ այն դեպքերը, երբ անձինք չեն կարող կամ դադարում են համարվել այդպիսիք),
- այն գործարքների (գործունեության) մասով, որոնք ենթակա չեն պարզեցված հարկով կամ հաստատագրված վճարներով հարկման:

Տնտեսական գործունեություն իրականացրած՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ընթացիկ տարում համարվում են ԱԱՀ վճարող, եթե նրանց՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 3 միլիոն դրամը: Այդ անձինք ԱԱՀ հաշվարկում և վճարում են 3 միլիոն դրամը գերազանցող մասի համար:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն օրենքի համաձայն տնտեսվարող սուբյեկտները համարվում են ԱԱՀ վճարող, եթե չեն համարվում պարզեցված հարկ վճարող, ինչպես նաև համարվում են ԱԱՀ վճարող այն գործարքների մասով, որոնք ենթակա չեն պարզեցված հարկով կամ հաստատագրված հարկով հարկման: Իսկ այն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, որոնց տարեկան հասույթի գումարը չի գերազանցել 3 մլն դրամը, չեն համարվում ԱԱՀ վճարող:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը փոխարինել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով.

«Անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ սույն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը չի գերազանցել 58.35 մլն դր, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58.35 մլն դր գերազանցելու պահից՝ 58.35 մլն դր գերազանցող մասի համար:

Սույն հոդվածի 1-ին մասում նշված չափի որոշման նպատակով հաշվի է առնվում նաև ԱԱՀ-ին փոխարինող հաստատագրված վճարներով հարկվող օբյեկտ համարվող գործունեության տեսակների իրականացումից ստացման ենթակա հասույթը:

Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն տարածվում՝

- ա) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող և ներմուծող անձանց նկատմամբ, կամ
- բ) լիցենզավորման ենթակա այն գործունեություն իրականացնողների կամ լիցենզիա ունեցողների նկատմամբ, որոնց գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 100 հազար դրամ կամ ավելի, կամ
- գ) այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ, որոնց պատկանում է այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 % և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին), կամ
- դ) այն կազմակերպությունների նկատմամբ, որոնց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 % և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, կամ
- ե) այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 % և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 % և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին), ընդ որում, այս դեպքում կազմակերպություններից ոչ մեկի նկատմամբ չի կարող տարածվել սույն մասի դրույթները, կամ
- զ) այն առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ, որի կողմից նախորդ օրացուցային տարում ապրանքների մատակարարումից հաշվարկված եկամուտների առնվազն 80 %-ը վերաբերում է մեկ հարկ վճարողից ստացման ենթակա եկամուտներին և (կամ) որի կողմից նախորդ օրացուցային տարում ապրանքների ձեռքբերման համար կատարման ենթակա ծախսերի առնվազն 80 %-ը վերաբերվում է մեկ հարկ վճարողի, կամ
- է) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների համար որոշվող հարկվող շրջանառության մասով:

Անձինք, ովքեր սույն հոդվածի համաձայն չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն իրենց հաշվառման վայրի հարկային մարմնին գրավոր հայտարարություն են ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ, հայտարարությունում նշված օրվանից, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, համարվում են ԱԱՀ վճարողներ:»:



## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն է տրվում չհամարվել ԱԱՀ վճարող, որոշակի բացառություններով համդերժ, եթե նրանց իրացման շրջանառության տարեկան հասույթը չի գերազանցում 58.35 մլն դրամը և վերջիններս համապատասխանում են օրենքի մի շարք պայմաններին. մասնավորապես.

- ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող և ներմուծող անձանց նկատմամբ
- այնպիսի լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող, որի համար լիցենզիայի տարեկան պետական տուրքի գումարը սահմանված է 100.000 դրամ և ավել
- այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ, որոնց պատկանում է այլ անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոս և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին)
- այն կազմակերպությունների նկատմամբ, որոնց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոս և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի
- այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոս և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին, որին միաժամանակ պատկանում է մեկ այլ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոս և ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին), ընդ որում, այս դեպքում կազմակերպություններից ոչ մեկի նկատմամբ ԱԱՀ-ի շեմը չի կարող տարածվել
- այն առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ, որի կողմից նախորդ օրացուցային տարում ապրանքների մատակարարումից կամ ծառայությունների մատուցումից հաշվարկված եկամուտների առնվազն 80 տոկոսը վերաբերում է մեկ հարկ վճարողից ստացման ենթակա եկամուտներին և (կամ) որի կողմից նախորդ օրացուցային տարում ապրանքների ձեռքբերման համար կատարման ենթակա ծախսերի առնվազն 80 տոկոսը վերաբերվում է մեկ հարկ վճարողի
- ԱՁ չհանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների համար որոշվող հարկվող շրջանառության մասով:

## Օրինակներ

Ենթադրենք, «Արեգակ» ՍՊԸ-ն ունի 1000 միավոր կանոնադրական կապիտալ, որից 230 միավորը պատկանում է «Բարդի» ՍՊԸ-ին: Քանի որ «Բարդի» ՍՊԸ-ի բաժնեմասը գերազանցում է «Արեգակ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 20% (230>1000x20%), հետևաբար «Բարդի» ՍՊԸ-ն չի կարող լինել ԱԱՀ չվճարող: ԱԱՀ չվճարող չի կարող համարվել նաև «Արեգակ» ՍՊԸ-ն (ըստ փոփոխության դ. կետի):

1. Ենթադրենք, Պողոս Պողոսյանը «Լատ» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում ունի 21% փայաբաժին, իսկ «Սարք» ՓԲԸ-ում՝ 38%: Հետևաբար «Սարք» ՓԲԸ-ն և «Լատ» ՍՊԸ-ն չեն կարող լինել ԱԱՀ չվճարող:
2. Իսկ եթե Պողոս Պողոսյանը «Լատ» ՍՊԸ-ում ունենա 12 % փայաբաժին, իսկ «Սարք» ՓԲԸ-ում ունենա 15% փայաբաժին, ապա «Լատ» ՍՊԸ-ն և «Սարք» ՓԲԸ-ն կարող են լինել ԱԱՀ չվճարող:

Ենթադրենք «Վուշ» ԲԲԸ-ի տարեկան շրջանառությունը կազմել է 2.2 մլն դր, որից 2.0 մլն դր. նա վաճառել է «Վարդ» ՍՊԸ-ին: Քանի որ 2,0 մլն > 2,2մլն-ի 80%-ից, ապա «Վուշ» ԲԲԸ-ն և «Վարդ» ՍՊԸ-ն գալիք տարում չեն կարող համարվել ԱԱՀ չվճարող:

Ենթադրենք «ԱՅԲ ՇԻՆ» ՓԲԸ-ի իրականացում է կապիտալ շինարարության ոլորտում առևտրային գործունեություն: Քանի որ կապիտալ շինարարությունը ենթակա է լիցենզավորման, իսկ լիցենզիայի տարեկան պետական տուրքի գումարը սահմանված է 100.000 դրամ, ապա անկախ ամենիչից, ընկերությունը չի կարող համարվել ԱԱՀ չվճարող:

Ենթադրենք ԱՁ չհանդիսացող ՀՀ քաղաքացի Արմեն Արմենակյանը ներդրում է կատարել առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում իրեն պատկանող ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող անավարտ շինությունը, որը անկախ գնահատողի կողմից գնահատվել է 8 մլն դրամ: Այս դեպքում չմայած նրան, որ ԱԱՀ հարկվող շրջանառությունը չի գերազանցում օրենքով սահմանված շեմը, քաղաքացին կհամարվի ԱԱՀ վճարող:



## ՀՈՂՎԱԾ 6 մաս 1

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հողված 6. ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝

1) ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը՝ հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով:  
Ֆիզիկական անձանց անձնական գույքի (այդ թվում՝ բնակելի շինության) օտարումը, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի, ապրանքների մատակարարում չի համարվում:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հողվածի համաձայն ֆիզիկական անձանց անձնական գույքի օտարումը չէր դիտվում որպես ԱԱՀ-ով հարկվող գործարք:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 3. Օրենքի 6-րդ հողվածի 1-ին կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ապրանքի մատակարարում է համարվում նաև ֆիզիկական անձանց պատկանող՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի, արտադրական, այլ առևտրային և հասարակական նշանակության գույքի, ներառյալ՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի (այդ թվում ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքի և հողերի) օտարումը (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում դրանց ներդրումը):

Ապրանքի մատակարարում չի համարվում ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված (սպառողական նպատակներով օգտագործման ենթակա)՝ անձնական, ընտանեկան կամ տնային օգտագործման գույքի (այդ թվում՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, անձնական օգտագործման ավտոմեքենայի) և գույքային իրավունքների ֆիզիկական անձանց կողմից օտարման տնտեսական գործունեություն համարվող գործարքը, բացառությամբ ստորև նշված դեպքի: Մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող՝ նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի, որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում՝ ԱԱՀ-ով ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Սույն մասում նշված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ի պարզեցված հաշվարկների ներկայացման և գումարների վճարման կարգն ու ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Անկախ սույն կետում նշվածից՝ ֆիզիկական անձանց պատկանող՝ ժառանգին ժառանգության զանգվածում ներառվող գույքի օտարումը՝ ապրանքի մատակարարում չի համարվում: »:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Փոփոխությամբ լայնացվել է ֆիզիկական անձանց կողմից ԱԱՀ հարկվող շրջանառությունում ներառվող գործարքների ցանկը, մասնավորապես այսուհետև, ժառանգությունից բացի ցանկացած տիպի օտարում համարվում է ԱԱՀ-ով հարկվող գործարք, այդ թվում նաև գույքի՝ կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրումը: Բացառություն են կազմելու ֆիզիկական անձանց կողմից այնպիսի գույքի օտարման գործարքները, որոնց ժամանակ օտարվող գույքը.

1. չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության առարկա կամ
2. օտարման գործարքների թիվը մեկ օրացուցային տարվա ընթացքում չի գերազանցում երկուսը կամ
3. օտարման գործարքների թիվը մեկ օրացուցային տարվա ընթացքում գերազանցում է երկուսը, սակայն այդ գույքը ձեռք բերելուց անցել է մեկ տարուց ավելի ժամանակ կամ



## ՀՈԴՎԱԾ 8 Կետ 9

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հոդված 8. ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է հետևյալ կարգով.

9) շենքերի, շինությունների օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս՝ գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից, բացառությամբ սույն կետով նախատեսված դեպքի:

Գերակա հանրային շահերով հասարակության և պետության կարիքների համար օտարվող (օտարված) սեփականության դիմաց սեփականատիրոջը՝ կառուցված բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքի բնակարաններով կամ այլ տարածքներով, իսկ բնակելի թաղամասերում կամ համալիրներում՝ բնակելի տներով հատուցելու դեպքում, ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով որոշվող արժեքը.

### ՍԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Օրենքի սույն կետի համաձայն տնտեսվարող սուբյեկտները շենքերի և շինությունների օտարման ժամանակ պարտավոր են ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը հաշվարկել ընդհանուր սահմանված կարգով, սակայն այն չի կարող փոքր լինել քան այդ շենքերի և շինությունների կադաստրային արժեքը, որը կիրառվում է այդ օբյեկտների գույքահարկով հարկման նպատակով: Գերակա հանրային շահերով հասարակության և պետության կարիքների համար օտարվող (օտարված) գույքի ԱԱՀ-ն պակաս չպետք է լիներ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով որոշվող արժեքից, այսինքն իրացման գործարքը կատարելու օրվա դրությամբ այդ գույքի անկախ գնահատողի կողմից գնահատած շուկայական արժեքի 115%-ից:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ կետում՝

- 1) առաջին պարբերությունում «շենքերի, շինությունների» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ անավարտ՝ կիսակառույց) բնակելի կամ այլ տարածքների» բառերով.
- 2) առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ՝ կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործարքների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունն որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս գույքահարկով հարկման նպատակով՝ օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի մակերեսի բաժնենմասին համապատասխանող արժեքի հինգ տոկոսից՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ մեծությունն ըստ ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանների բաշխվում է հավասարաչափ»:

### ՍԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ շենքերի և շինությունների օտարման դեպքում կիրառվող, ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշելու սկզբունքը տարածվեց նաև անավարտ և կիսակառույց շինությունների վրա, ինչպես նաև ավելացվեց, որ անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման գործարքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով, սակայն տարեկան կտրվածքով այն չի կարող փոքր լինել քան տվյալ գույքի մակերեսին համապատասխանող կադաստրային արժեքի 5%:



Հոդված 23. Սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են՝ արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով (բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի), որոնց դիմաց բանկային փոխանցմամբ կատարվել է վճարում, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

Արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում իրականացված գործարքների մասով ոչ բանկային փոխանցումներով վճարված գումարները հաշվանցվում են, եթե ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքի գումարը (առանց ավելացված արժեքի հարկի)՝

2003 թվականի ընթացքում յուրաքանչյուր միանվագ գործարքի համար չի գերազանցում 500 հազար դրամը, իսկ հաշվետու ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 5 միլիոն դրամը,

2004 թվականի ընթացքում միանվագ գործարքի համար չի գերազանցում 300 հազար դրամը, իսկ հաշվետու ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 3 միլիոն դրամը,

2005 թվականի ընթացքում միանվագ գործարքի համար չի գերազանցում 100 հազար դրամը, իսկ հաշվետու ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 1 միլիոն դրամը:

Ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով ուշ ստացված հարկային հաշիվներում առանձնացված և հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ ստացվել է հարկային հաշիվը, բացառությամբ էլեկտրաէներգիայի գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների, որոնք կարող են հաշվանցվել նաև էլեկտրաէներգիայի ստացման հաշվետու ժամանակաշրջանում:

Ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվել է վճարումը:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասում «բանկային փոխանցմամբ» բառերը փոխարինել «բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին» բառերով, իսկ նույն մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց կանխիկ դրամով վճարված գումարները օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հաշվանցվել նաև հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոններում և (կամ) կրճատ հաշիվ ապրանքագրերում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով, եթե այդ գործարքների գումարը (ներառյալ ԱԱՀ-ի) յուրաքանչյուր միանվագ գործարքի համար չի գերազանցում 300 հազար դրամը, իսկ յուրաքանչյուր ամսվա ընթացքում բոլոր այդպիսի գործարքների համար՝ 3 միլիոն դրամը:»:

բ) 1-ին մասը լրացնել նոր նախադասություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումները մասնակիորեն կատարվելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումները կատարվում են վճարմանը համամասնորեն:

Միանվագ գործարքի գումարը (ներառյալ ԱԱՀ-ն) 300 հազար դրամը գերազանցելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է միայն բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումներով վճարումների դեպքում, իսկ ամսվա ընթացքում 300 հազար դրամը չգերազանցող բոլոր միանվագ գործարքների ընդհանուր գումարը 3.0 մլն. դրամը գերազանցելու դեպքում սահմանված կարգով հաշվանցման ենթակա է այն գործարքի ԱԱՀ-ի ամբողջ գումարը, որի արժեքի հանրագումարով չի գերազանցվել 3 միլիոն դրամի սահմանաչափը:

Անկախ սույն հոդվածի դրույթներից 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողները 2008 թվականի հաշվետու ժամանակաշրջաններում առանց հարկային հաշիվների կարող են հաշվանցել արտադրական և առևտրային նպատակներով այդ հաշվետու ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների, ինչպես նաև 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդների մասով մատակարարներին կանխիկ կամ բանկային փոխանցումներով վճարված գումարներում ներառված՝ ԱԱՀ-ի հաշվարկային դրույթաչափով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները, եթե առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ փաստաթուղթ (փաստաթղթեր):»:

գ) նախավերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն ԱԱՀ վճարող համարվող անձինք այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող են հաշվանցել ԱԱՀ վճարող դառնալու պահին առկա ապրանքային մնացորդի մասով մատակարարների կողմից տրամադրված հաշվարկային փաստաթղթերում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները:

Սույն օրենքի 3-րդ հոդվածին համապատասխան ԱԱՀ վճարող համարվելուց դադարած անձանց մոտ ԱԱՀ վճարող չհամարվելու օրացուցային տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը ենթակա չէ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ու վերագրվում է արտադրության և շրջանառության ծախսերին:»:



## ՀՈՂՎԱԾ 23 մաս 1 մեկնաբանություն

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Սույն հոդվածի համաձայն ԱԱԳ-ի դեբետագրում հնարավոր էր կատարել ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով ստացված հարկային հաշիվների դիմաց միայն բանկային փոխանցմամբ մատակարարներին վճարում կատարելու դեպքում:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխության նպատակներն են.

- Հստակեցնել «բանկային փոխանցում» հասկացությունը այս օրենքի տեսանկյունից, քանի որ այն նախկինում տարածայնությունների տեղիք էր տալիս այն դեպքերի համար, երբ օրինակ. մատակարարին վճարումը կատարվում էր նրա բանկային հաշվին գնորդի կողմից կանխիկ մուտքագրելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ կոմունալ վճարումներ էր կատարվում փոստի միջոցով: Այժմ նշված դեպքերում նույնպես թուլատրվում է հաշվանցում կատարել:
- Թուլատրել ԱԱԳ-ի հաշվանցում նաև որոշակի չափով կանխիկ վճարումներ կատարելու դեպքում նա: Այսպես, օրինակ ԱԱԳ-ի դեբետագրում թուլատրվում է մատակարարներին կանխիկ վճարում կատարելու դեպքում, երբ առկա են այդ վճարումները հաստատող ՀՂՄ-ի կտրոնները (որոնցում նշված են ԱԱԳ-ի գումարները) և (կամ) կրճատ հաշիվ ապրանքագրերը (որոնցում նշված են ԱԱԳ-ի գումարները), սակայն այդ գործարքների ամսեկան ընդհանուր գումարը չպետք է անցնի 3 մլն դրամից: Ինչպես նաև մեկ միանվագ գործարքի գումարը չպետք է անցնի 300 հազ դրամից: Եթե, օրինակ, ամսեկան գործարքների ընդհանուր գումարը կազմում է 3150 հազ դրամ, որը կազմված է 300 հազ դրամը չգերազանցող գումարներից և ենթադրենք վերջին գործարքի գումարը, 250 հազ դրամ է, որի արդյունքում գործարքների ընդհանուր գումարը գերազանցել է 3 մլն դրամը (կազմել է 3150 հազ դրամ), այդ դեպքում այս վերջին 250 հազ դրամ գործառնության մեջ նշված ԱԱԳ-ն չի հաշվանցվի:
- Սահմանել անցումային դրույթներ՝ 2008թ-ի օրենսդրական փոփոխություններից հետո պարզեցված հարկից ընդհանուր կարգով հարկման դաշտ անցած հարկ վճարողների համար:

Այսպես, օրինակ. նրանք 2008թ-ի ընթացքում կարող են հաշվանցել 2008թ-ի հունվարի մեկի դրությամբ առկա ապրանքային մնացորդների (ոչ անավարտ արտադրանք, հումք, կամ պատրաստի արտադրանք) մեջ ներառված հաշվարկային ԱԱԳ-ն, եթե նրանք դրանց դիմաց կատարել են վճարումներ թե բանկի միջոցով, թե կանխիկ ձևով: Դա վերաբերվում է նաև 2008թ-ի ընթացքում ձեռք բերված ապրանքներին նույնպես: ԱԱԳ-ի հաշվանցումը կարող են կատարել նաև այն դեպքերում, երբ առկա չէ հարկային հաշիվաբարարը վճարումը հիմնավորող ցանկացած այլ փաստաթուղթ՝ դրամարկղի ելքի օրդեր, առ հաշվի հաշվետվություն, ՀՂՄ կտրոն և այլն: Տվյալ դեպքում անցյալ հաշվետու ժամանակաշրջաններում հաշվանցումները կատարվում են այդ հաշվետու ժամանակաշրջանների համար ավելացված արժեքի հարկի ճշտված հաշվարկներ ներկայացնելու միջոցով, եթե տվյալ հաշվետու ժամանակաշրջանն ընդգրկված չէ հարկային մարմինների կողմից արդեն ստուգված կամ ստուգվող ժամանակահատվածներում:

Նմանատիպ մոտեցում է տարածվում նաև այն դեպքում, երբ ԱԱԳ վճարող չհամարվող կազմակերպությունները դառնում են ԱԱԳ վճարող, այդ դեպքում նրանք նույնպես իրենց մոտ տվյալ պահին առկա ապրանքային մնացորդների մեջ ներառված ԱԱԳ-ն կարող են հաշվանցել:





### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Մինչև 2009 թվականի հունվարի 1-ը բնակչությանը Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքներին, ջրօգտագործողների ընկերություններին, ջրօգտագործողների ընկերությունների միություններին, համատիրություններին, բազմաբնակարան շենքի սպասարկում (կառավարում) իրականացնող անձանց խմելու և ոռոգման ջրի մատակարարման գործարքների, կեղտաջրերի հեռացման ծառայությունների, ինչպես նաև Գնումների մասին է Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պետական գնումների շրջանակներում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորության ծագման պահը որոշվում է ձեռք բերված ու մատակարարված ապրանքների և մատուցված ու ստացված ծառայությունների դիմաց վճարման պահով:

Սույն հոդվածի կիրառման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե վճարման ենթակա է հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված և գնորդներից (պատվիրատուներից) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են ԱԱՀ-ի այն գումարները, որոնք նույն հաշվետու ժամանակաշրջանում՝

- 1) բանկային փոխանցմամբ վճարվել են մատակարարներին՝ արտադրական և առևտրային այլ նպատակներով հանրապետության ներքին տարածքում ձեռք բերված ապրանքների (ներառյալ՝ հիմնական միջոցները), ոչ նյութական ակտիվների և մատուցված ծառայությունների դիմաց՝ սույն օրենքի IV բաժնի I ենթաբաժնում սահմանված կարգով ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարի չափով.
- 2) գանձվել են Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից՝ հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար՝ օրենքով սահմանված կարգով և չափերով:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 6. Օրենքի 24<sup>1</sup>-րդ հոդվածում «բանկային փոխանցմամբ» բառերը փոխարինել «սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերով:





### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Սույն օրենքի 23 հոդվածում նշված դեպքերում մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցման (պակասեցման) ենթակա չեն՝

1) ԱԱՀ վճարող չհամարվող անձանց կողմից.

2) սույն օրենքի 7 հոդվածի համաձայն հարկվող օբյեկտ չհամարվող և 15 հոդվածի համաձայն ԱԱՀ-ից ազատված գործարքների (գործառնությունների) գծով, ինչպես նաև այն գործարքների գծով, որոնց վրա չի տարածվում սույն օրենքի գործողությունը: Սույն կետում նշված դեպքերում մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները միացվում են ապրանքները ձեռք բերելու գնին կամ արտադրության շրջանառության ծախսերին, բացառությամբ սույն օրենքի 7 հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքերի:

Բացառությամբ ապրանքների արտահանման դեպքի, սույն կետով սահմանված կարգը տարածվում է նաև շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարան անմիջական արտադրողից կամ անմիջական ներմուծողից ձեռք բերողների վրա՝ այդ տարայի մասով, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ԱԱՀ-ը փոխարինող հաստատագրված վճարումներ կատարողների վրա.

Սույն կետում նշված՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործարքներին ուղղակիորեն վերաբերվող ձեռքբերումների մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում հաշվանցված ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման և պետք է միացվեն ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման գնին կամ արտադրության ու շրջանառության ծախսերին: Սույն մասի դրույթները գործում են այն ձեռքբերումների նկատմամբ, որոնք կատարվել են 2001 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:

3) ոչ արտադրական (ոչ առևտրային) նպատակներով ձեռք բերված և (կամ) օգտագործված ապրանքների և ծառայությունների գծով, բացառությամբ ապրանքների ու ծառայությունների անհատույց (մասնակի հատուցմամբ) հատկացման դեպքերի:

4) ԱԱՀ-ով հարկվող գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների և այդ գործարքների մասով ձեռքբերումների (ձեռքբերված (կամ ներմուծված) ապրանքների ու ստացված ծառայությունների) գծով մատակարարների հարկային հաշիվներում (մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարների միջև առաջացող բացասական տարբերությունը:

5) ոչ իրացման նպատակով ձեռք բերված (ներմուծված) մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման հարկային հաշիվներում (ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները: Նշված գումարները ենթակա են վերաձևակերպման և սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվանցման՝ այդ ավտոմեքենաների հետագա իրացման պահին դրանց մնացորդային արժեքի նկատմամբ հաշվարկային եղանակով հաշվարկված ԱԱՀ-ի գումարի չափով:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 7. Օրենքի 26-րդ հոդվածը «հայտարարագրերում» բառերից հետո լրացնել «, հսկիչ-դրամարկային մեքենաների կտրոններում, կրճատ հաշիվ ապրանքագրերում» բառերով, իսկ սույն հոդվածի 2-րդ կետի 3-րդ պարբերությունում «Սույն կետում նշված» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված դեպքերում» բառերով:



Հոդված 32. Սույն օրենքի 23 և 24 հոդվածների համաձայն հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար:

Սույն օրենքի իմաստով ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը՝ բացառությամբ սույն հոդվածի երրորդ մասով սահմանված դեպքի:

Այն անձանց համար, որոնց՝ սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված գործարքներից հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 60 միլիոն դրամը, ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը:

Հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարումները պետական բյուջե կատարվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 8 Օրենքի 32-րդ հոդվածում «հասույթը» բառից հետո լրացնել «(առանց ԱԱՀ-ի)» բառերը, իսկ «60 մլն դրամը» բառերը փոխարինել «100 մլն դրամը» բառերով:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ ԱԱՀ վճարող համարվողները համարվում են ամսեկան հարկ վճարողներ և ԱԱՀ-ի հաշվարկները հարկային տեսչություն են ներկայացնում ամիսը մեկ անգամ, ոչ թե եռամսյակը մեկ անգամ, եթե նախորդ տարվա նրանց ամբողջ գործարքներից զոյացած հասույթի ընդհանուր գումարը առանց ԱԱՀ-ի գերազանցում է 100 մլն դրամը:

### Օրինակներ

1. «Լետան» ՍՊԸ-ն 2009թ. ունեցել է 80000,0 հազ. դր. իրացման շրջանառություն առանց ԱԱՀ-ի գործունեության հետևյալ տեսակներից.

- ա. հանրային սնունդ - 32000,0 հազ. դր. (հաստատագրված վճար)
- բ. մանրամեծածախ առևտուր - 48000,0 հազ. դր. + 9600 (20% ԱԱՀ)
- Ընդամենը՝ 80000,0 հազ. դր.

Այդ դեպքում 2010 թ-ին «Լետան» ՍՊԸ-ն կհամարվի եռամսյակային հարկ վճարող և ԱԱՀ-ի հաշվետվություն կներկայացնի հարկային տեսչություն 3 ամիսը մեկ անգամ:

2. «Լետան» ՍՊԸ-ն 2009թ. ունեցել է 1610000,0 հազ. դր. իրացման շրջանառություն առանց ԱԱՀ-ի գործունեության հետևյալ տեսակներից.

- ա. հացի արտադրություն - 480.000,0 հազ. դր. +96.000 (ԱԱՀ)
- բ. մեծածախ առևտուր - 520.000.0 հազ. դր. +104.000 (ԱԱՀ)
- գ. տոնավաճառի կազմակերպում - 610.000,0 հազ.դր. (հաստատագրված վճար)
- Ընդամենը՝ 1810000,0 հազ. դր.

Այդ դեպքում 2010 թ-ին «Լետան» ՍՊԸ-ն կհամարվի ամսեկան հարկ վճարող և ԱԱՀ-ի հաշվարկ կներկայացնի հարկային տեսչություն յուրաքանչյուր ամիս:



## ՀՈՂՎԱԾ 43<sup>1</sup>

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հողված 43<sup>1</sup>. Սույն օրենքի 20 հոդվածով սահմանված կարգով հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ապրանքների մատակարարման կամ ձեռքբերման և ծառայությունների մատուցման կամ ստացման գծով ԱԱՀ-ի գումարները չներառելու (չներկայացնելու) դեպքում տեղեկությունները ներկայացնող անձը վճարում է տուգանք՝ սխալ ներկայացված յուրաքանչյուր տեղեկության (հարկային հաշվի) համար 5,000 դրամի չափով: Սույն օրենքի 20 հոդվածին համապատասխան հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ներառման ենթակա՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնք չեն արտացոլվել ներկայացված տեղեկություններում կամ որոնց վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, ենթակա չեն հաշվանցման այդ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն կարող են հաշվանցվել այդ տեղեկությունները ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանում, եթե այդ տեղեկությունները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներին:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հողված 9. Օրենքի 43<sup>1</sup> հոդվածում «ենթակա չեն հաշվանցման» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությամբ սահմանված դեպքի)» բառերը:

Հողված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի վերջին պարբերության դրույթների, որոնք կիրառվում են 2008 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու հետևանքով 2009 թվականի հունվարի 1-ից պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողների համար Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված չափի հաշվարկման համար հաշվի է առնվում 2008 թվականի ընթացքում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը, ներառյալ՝ վարձավճարները:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ միանվագ գործարքի գումարը (ներառյալ ԱԱՀ) եթե չի գերազանցում 300 հազ. դր. (ՀԴՄ կտրոններով և (կամ) կրճատ հաշիվ ապրանքագրերով), իսկ ամսվա ընթացքում ընդհանուր 3,0 մլն դր, ապա հարկ վճարողները կարող են տեղեկություններ չներկայացնելու դեպքում նույնպես հաշվանցել այդ գործարքներում ներառված ԱԱՀ-ն:



## 3. «ՇԱՐՈՒԹԱՐԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ

Կատարվել են փոփոխություններ նշված օրենքի 13, 16, 19, 43, 46, 47, 47<sup>1</sup> հոդվածներում, ինչպես նաև ավելացվել է նոր 76 հոդվածը:

### ՀՈԴՎԱԾ 13

#### ՆԱԽԿԻՆՈՒՄ

1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է՝

- ա) հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով.
- բ) վարձակալի մոտ՝ վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախսերի չափով:

2. Հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ավելացվում են այն հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին, որի վրա այդ ծախսերը կատարվել են, և՝

- 1) եթե այդ ծախսերը չեն գերազանցում հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը, ապա ամորտիզացվում են սույն օրենքի 12 հոդվածով սահմանված կարգով,
- 2) եթե այդ ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքը, ապա ամորտիզացվում են սույն օրենքի 12 հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան հինգ տարվա ընթացքում: Եթե հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է հինգ տարուց պակաս, ապա այդ հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացվում են այդ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետում:

#### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. «Շահութահարկի մասին» ՀՀ 30.09.1997թ. ՀՕ-155 օրենքի (այսուհետ Օրենք) 13-րդ հոդվածում 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետով՝

«գ» հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերի չափով՝ օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարվող հարկատուների համար».

2. 2-րդ կետի առաջին պարբերությունը «կապիտալ բնույթի ծախսերն» բառերից հետո լրացնել «օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող համարվող հարկատուների համար» բառերով:

#### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ հնարավորություն է տրվում ԱԱՀ վճարող չհամարվողներին այն դեպքերում, երբ հիմնական միջոցի վրա կատարվում են ծախսեր, անկախ նրանից, թե այդ ծախսերը կապիտալ բնույթի ծախսեր են համարվում, թե ոչ, դրանք ծախսագրել տվյալ հաշվետու տարում:



#### 1. Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից չեն նվազեցվում՝

- ա) վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող վճարները.
- բ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գովազդի, մարքեթինգի (ապրանքային և ծառայությունների շուկայի ուսումնասիրություն, ապրանքային և ծառայությունների շուկայում առաջխաղացում), կադրերի պատրաստման և վերապատրաստման համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը.
- գ) հատուկ սննդի, արտահագուստի և այլ հանդերձանքի, աշխատակիցներին՝ օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը.
- դ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման ծախսերի, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ օրապահիկի ծախսերի համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը.
- ե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ներկայացուցչական ծախսերը.
- զ) առողջապահական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների տների, մանկական նախադպրոցական հիմնարկների, վերականգնողական ճամբարների, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների, ինչպես նաև բնակարանային ֆոնդի օբյեկտների պահպանման համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը գերազանցող ծախսերը (այդ թվում՝ անորտիզացիոն մասհանումները և նորոգման ծախսերը).
- է) պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դիմաց գանձվող տույժերը, տուգանքները և այլ գույքային սանկցիաները, բացի քաղաքացիական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար գանձվողներից.
- ը) անհատույց տրամադրած ակտիվները, ներած պարտավորությունները, բացառությամբ սույն օրենքի 23 հոդվածում նախատեսված դեպքի.
- թ) միավորումներին և արտագերատեսչական կառավարման այլ կառույցներին տրամադրված հատկացումները.
- ժ) սպասարկող տնտեսությունների պահպանման ծախսերը (շինությունների անվճար տրամադրում, հանրային սննդի ձեռնարկություններին կոմունալ ծառայությունների արժեքի վճարում).
- ժա) հարկատուի կողմից արտադրանքի արտադրության հետ չառնչվող ծառայությունների (քաղաքների կամ այլ բնակավայրերի բարեկարգման աշխատանքներ, գյուղատնտեսական աշխատանքներին օժանդակություն և այլն) մատուցման կամ դրանց դիմաց կատարվող ծախսերը,
- ժբ) այն եկամուտների ստացման հետ կապված ծախսերը, որոնք միաժամանակ նվազեցվում են համախառն եկամտից.
- ժգ) վարկերի և փոխառության դիմաց վճարվող տոկոսների՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնակի չափը գերազանցող մասը:

2. Եթե Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սույն հոդվածի 1-ին կետի ,աե-զե ենթակետերով նախատեսված ծախսերի համար նվազեցման թույլատրելի չափը չի սահմանվում, ապա համախառն եկամուտը նվազեցվում է փաստացի կատարված ծախսերի ողջ գումարի չափով:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածով շահութահարկով հարկման տեսանկյունից որոշակի դեպքերում սահմանվում էին ծախսերը նվազեցնելու նորմաներ:



## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածում՝

ա) 1-մասի նախաբանում «Հարկվող շահույթը որոշելիս» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի,» բառերը.

բ) լրացնել նոր 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«3. Օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպությունների համար, ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում, սույն հոդվածով սահմանված ծախսերը հաշվի են առնվում ամբողջությամբ, բացառությամբ օրապահիկի, ինչպես նաև դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների, որոնք հաշվի են առնվում սույն Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով:»:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ ԱԱՀ վճարող չհամարվողների համար կատարված բոլոր ծախսերը նվազեցվում են առանց նորմաների, այսինքն՝ ամբողջությամբ, բացառությամբ օրապահիկի, ինչպես նաև դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) աշխատանքների կատարման դեպքերում հատուցման գումարների:



### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված չափը չգերազանցող օրապահիկի ծախսերի չափով՝ առանց հիմնավորող փաստաթղթերի:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հարկվող շահույթը որոշելիս առանց հիմնավորող փաստաթղթերի համախառն եկամուտը նվազեցվում է՝

ա) ՀՀ կառավարության սահմանած չափը չգերազանցող օրապահիկի, ինչպես նաև դաշտային պայմաններում և տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում հատուցման գումարների չափով,

բ) 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողների համար 2008 թվականի ցուցանիշները ձեռք բերված ապրանքների, ինչպես նաև 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդների մասով կատարված ծախսերի չափով, եթե այդ ծախսերի մասով առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ փաստաթուղթ (փաստաթղթեր),

գ) ՀՀ տարածքում փաստաթղթերով չհիմնավորված այն ծախսերի չափով, որոնց համար հարկային մարմիններին «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28<sup>4</sup>-րդ հոդվածով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում ներկայացվել են տեղեկություններ (այդ թվում՝ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքի մասով) և այդ տեղեկությունների հավաստիությունը հարկային մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է՝ դրա վերաբերյալ հարկային մարմիններից գրավոր տեղեկատվություն ստանալու հաշվետու ժամանակաշրջանում:»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ հարկ վճարողները իրենց ծախսերը կարող են առանց հիմնավորող փաստաթղթերի նվազեցնել նաև դաշտային պայմաններում եւ տեղափոխման (տեղաշարժման) բնույթի աշխատանքների կատարման դեպքում հատուցման գումարների չափով, ինչպես նաև սահմանվել են մեղմացուցիչ դրույթներ այն հարկատուների նկատմամբ, որոնք 2008թ-ի հունվարի մեկից անցում են կատարել պարզեցված հարկով հարկման դաշտից ընդհանուր կարգով հարկման դաշտ: Մինչև սույն փոփոխությունը վերջիններս անցման օրվա դրությամբ ապրանքային մնացորդները չէին կարող ծախսագրել: Իսկ սույն փոփոխությունից հետո նրանք 2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա ապրանքային մնացորդները կարող են ծախսագրել, եթե այդ ծախսերի մասով առկա է որևէ հաշվարկային փաստաթուղթ կամ բանկային փոխանցումը կամ կանխիկ վճարումների կատարված լինելը հիմնավորող որևէ փաստաթուղթ (փաստաթղթեր), ինչպես նաև այն դեպքում, երբ հարկատու հարկային մարմիններին սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է տեղեկություններ և այդ տեղեկությունների հավաստիությունը հարկային մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է՝ դրա վերաբերյալ հարկային մարմիններից գրավոր տեղեկատվություն ստանալու հաշվետու ժամանակաշրջանում:



## Օրինակներ

### բ) կետի վերաբերյալ

«Շարժ» ՍՊԸ-ն 2007թ-ին զբաղվել է կահույքի արտադրությամբ և գործել է պարզեցված հարկով հարկման դաշտում: 2008 թ-ի հունվարի 1-ից՝ օրենսդրական փոփոխությունների հետևանքով, անցել է ընդհանուր կարգով հարկման դաշտ: 2008 թ-ի հունվարի 1-ի դրությամբ նա ունեցել է 7.4 մլն դր ասրանքային մնացորդ (հունք – 3.2 մլն դր, պատրաստի արտադրանք – 4.2 մլն դր):

1) Ընկերությունը պատրաստի արտադրանքը վաճառել է 5 մլն դր-ով + 1 մլն (ԱԱՀ) = 6 մլն

Նշենք այն փաստը, որ նա հունքը ձեռք է բերել 2007 թ-ի հոկտեմբեր ամսին «Արևածագ» ՓԲԸ-ից, որի համար ունի ձեռք բերման հաշիվ:

Այդ դեպքում վաճառված արտադրանքի ինքնարժեքը համախառն եկամտից կնվազեցվի ամբողջությամբ (4.2 մլն դր):

2) Ընկերությունը հունքը ձեռք է բերել 2007 թ-ի նոյեմբեր ամսին և ունի շուկայական գնումը հավաստող դրամարկղի ելքի կտրոն՝ 4.2 մլն դր-ի չափով:

Այդ դեպքում վաճառված արտադրանքի ինքնարժեքը համախառն եկամտից նույնպես կնվազեցվի ամբողջությամբ (4.2 մլն դր):

3) Ընկերությունը հունքը ձեռք է բերել 2007 թ-ին, ընդ որում մի մասի համար ունի ձեռքբերումը հավաստող փաստաթուղթ (հունքի ներմուծման հայտարարագիր), ընդհանուր ձեռք բերման արժեքով 3.7 մլն դր, իսկ մնացած մասի համար (4.2 մլն դր – 3.7 մլն դր = 500 հազ դր) չունի ձեռք բերումը հաստատող ոչ մի փաստաթուղթ (հաշիվ, դրամարկղի օրդեր, ՀՊՄ կտրոն և այլն):

Այս դեպքում վաճառված արտադրանքի ինքնարժեքը համախառն եկամտից կնվազեցվի 3.7 մլն դր-ի չափով, քանի որ ձեռք բերումը հավաստող փաստաթուղթ կա միայն այդ գումարի չափով հունքի ձեռք բերման համար:

### գ) կետի վերաբերյալ

«Ակտեոն» ՍՊԸ-ն «Օկտավա» ՍՊԸ-ից ձեռք է բերել ասրանք 700 հազ դր-ի չափով: «Օկտավա» ՍՊԸ-ն հրաժարվել է հաշիվ տրամադրել: Եթե «Ակտեոն» ՍՊԸ-ն սահմանված կարգով տեղեկություն է ներկայացնում հարկային մարմիններին այդ փաստի վերաբերյալ, և վերջիններս հիմնավորում են այն, ապա այդ ասրանքի վաճառքից հետո «Ակտեոն» ՍՊԸ-ն համախառն եկամտից կարող է նվազեցնել 700 հազ դր՝ վաճառքին համամասնորեն:





### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հոդված 43. Հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելիս հարկատուն հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները՝

- ա).....
- բ).....
- գ).....

դ) շենքերի, շինությունների օտարման դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքի կատարման օրվա դրությամբ: Հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների օտարումից եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման դեպքում տարբերությունը գործարքի կատարման օրը դիտվում է որպես նոր սեփականատիրոջը ներված պարտավորություն:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 4. Օրենքի 43-րդ հոդվածի «դ» կետը՝

- 1) «շինությունների» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների» բառերով.
- 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Հարկվող շահույթը որոշելիս շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով եկամուտը որոշվում է գույքահարկով հարկման նպատակով դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքի, իսկ այդպիսի արժեքի բացակայության դեպքում՝ գույքահարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի բաժնեմասին համապատասխանող արժեքի 5 տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափով պակաս հատուցման դեպքում տարբերությունը դիտվում է որպես վարձակալին (փոխառուին) ներված պարտավորություն:»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ զուգահեռներ է տարված ԱԱՀ-ի օրենքի հետ: Սույն փոփոխությամբ պարզաբանվեց, որ շենքերի և շինությունների (այդ թվում անավարտ), ինչպես նաև բնակելի և ոչ բնակելի այլ տարածքների վարձակալության կամ անհատույց օգտագործման գործարքների դեպքում շահութահարկով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով, սակայն տարեկան կտրվածքով այն չի կարող փոքր լինել քան տվյալ գույքի կադաստրային արժեքի հինգ տոկոսը: Իսկ վարձավճարի և վերոհիշյալ մեծության բացասական տարբերությունը դիտվում է որպես վարձակալին ներված պարտավորություն:



1. Շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով ներկայացնում են շահութահարկի հաշվարկներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ձևերով հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը:

2. Շահութահարկի հաշվարկների և սույն հոդվածի 1-ին կետում նշված հաշվետվությունների ներկայացման ժամկետի մեջ ներառվում է նաև սույն հոդվածում նշված օրը, իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա ներկայացնելու ժամկետը տեղափոխվում է այդ օրվան հաջորդ առաջին աշխատանքային օրը:

3. Շահութահարկի հաշվարկ չեն լրացնում (և չեն ներկայացնում)՝

ա) գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ (հիմնականում) զբաղված հարկատուները, եթե հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:

բ) ոչ առևտրային կազմակերպությունները, եթե ստացված միջոցները բացառապես սույն օրենքի 8 հոդվածի համաձայն եկամուտ չեն համարվում:

գ) միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող և (կամ) միայն պարզեցված հարկ վճարող հանդիսացող հարկատուները:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 5. Օրենքի 46-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասում «ապրիլի 15-ը» բառերից հետո լրացնել «, իսկ ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունները այդ ժամկետում ներկայացնում են միայն սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված՝ շահութահարկի պարզեցված հաշվարկ» բառերը,

բ) 3-րդ մասի «գ» կետում հանել «և (կամ) միայն պարզեցված հարկ վճարող հանդիսացող» բառերը:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ 2009 թ-ի հունվարի մեկից հետո ԱԱՀ վճարող չհամարվողները, եթե ամբողջ տարին համարվել են ԱԱՀ չվճարող, ապա այլևս ֆինանսական հաշվետվություններ (ձև 1. ձև 2) չեն ներկայացնում հարկային տեսչությանը, այլ ներկայացնում են միայն շահութահարկի պարզեցված հաշվարկ: Ինչպես նաև այս փոփոխությամբ կատարվել է տեխնիկական փոփոխություն. նախկինում շահութահարկի հաշվարկ չէին ներկայացնում պարզեցված հարկ վճարողները, ոչ առևտրային կազմակերպությունները, հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնողները. այժմ, քանի որ 2009թ-ի հունվարի մեկից պարզեցված հարկ գոյություն չի ունենալու, հետևաբար այդ ցուցակից հանվել են պարզեցված հարկ վճարողները:



## ՆԱԽԿԻՆՈՒՄ

2. Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր ամիս, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի մեկ տասնվեցերորդի չափով՝ տվյալ ամսվա քսանհինգից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ: Բացառությամբ սույն հոդվածի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի, ընթացիկ տարվա կանխավճարների հաշվարկման համար հիմք է հանդիսանում նախորդ տարվա հարկվող շահույթի նկատմամբ կիրառվող դրույքաչափով հաշվարկված շահութահարկի գումարի և սույն օրենքի 52-րդ հոդվածին համապատասխան՝ նախորդ տարում օտարերկրյա պետություններում ստացված եկամտից վճարված շահութահարկի հաշվանցվող գումարների դրական տարբերությունը, ինչպես նաև նախորդ տարվա պարզեցված հարկի և (կամ) հաստատագրված վճարի մեջ շահութահարկին բաժին ընկնող գումարները՝ հաշվի առնելով շահութահարկի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից օգտվող հարկատուների համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված առանձնահատկությունը:

Սահմանված ժամկետներում կանխավճարային մուծումներ չկատարելու դեպքում հարկային տեսչության մարմիններն այդ կանխավճարային գումարների և դրանց գծով հաշվարկված տույժերի վերաբերյալ պահանջներ են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Այն հարկատուն, որը նախորդ տարում հարկվող շահույթ չի ունեցել, կամ որի նախորդ տարվա շահութահարկի գումարը չի գերազանցել 500 հազար դրամը, կարող է շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարներ չկատարել:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 6. Օրենքի 47-րդ հոդվածի՝

ա) 2-րդ մասում՝ «շահութահարկի փաստացի գումարի» բառերից հետո լրացնել «և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության» բառերը:

բ) 4-րդ մասում «չի գերազանցել 500 հազար դրամը» բառերից հետո լրացնել «կամ որը նախորդ տարում օրենքով սահմանված կարգով չի համարվել ԱԱՀ վճարող» բառերը:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ 2009 թ-ի հունվարի մեկից հետո ԱԱՀ վճարող չհամարվողները կարող են շահութահարկի կանխավճարներ չկատարել:



ՀՈԴՎԱԾ 471  
մաս 3

## ՆԱԽԿԻՆՈՒՄ

3. Նվազագույն շահութահարկը հաշվարկվում է նախորդ ամսվա ընթացքում ապրանքների (բացառությամբ հիմնական միջոցների, ինչպես նաև արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (որը չի ներառում նշված եկամուտների ստացման համար վճարած անուղղակի հարկերը) և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50 տոկոսը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 7. Օրենքի 471-րդ հոդվածի 3-րդ մասում՝

ա) «տարբերության նկատմամբ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի» բառերը,

բ) լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ

«Ընթացիկ տարում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպությունները ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում նվազագույն շահութահարկը հաշվարկում են սույն մասին համապատասխան հաշվարկված եկամտից՝ առանց հաշվի առնելու հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումները:»:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ 2009 թ-ի հունվարի մեկից հետո, ի տարբերություն ԱԱՀ վճարողների, ԱԱՀ վճարող չհամարվողները ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում նվազագույն շահութահարկը հաշվարկում են իրացման շրջանառությունից (առանց ԱԱՀ), առանց նվազեցնելու ամորտիզացիոն մասհանումները:



#### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 8. Օրենքում ավելացնել նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 76. Առանձին հարկ վճարողների 2008 և 2009 թվականների շահութահարկը 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողների համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2008 թվականի վճարման ենթակա շահութահարկը, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա շահութահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2 տոկոսից և ավել՝ համախառն եկամտի 10 տոկոսից: Սույն հոդվածին համապատասխան վճարված գումարները համարվում են այդ տարիների համար շահութահարկի վերջնական գումարներ»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից, իսկ սույն օրենքի 3 ղո հոդվածով սահմանված՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հունվարի 1-ից:

#### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ 2008 թ-ին պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած հարկ վճարողները տարեկան շահութահարկը հաշվարկելուց հետո, կատարում են համեմատություն. եթե իրենց կողմից հաշվարկված շահութահարկը փոքր է, քան 2008թ-ի համախառն եկամտի 2%-ը, ապա բյուջեի նկատմամբ շահութահարկի գծով պարտավորություն է հաշվարկվում և վճարվում տարեկան շրջանառության (առանց ԱԱՀ) 2%-ի չափով, իսկ եթե ավելի մեծ է ստացվում, քան համախառն եկամտի 10%-ը, ապա բյուջեի նկատմամբ շահութահարկի գծով պարտավորություն է հաշվարկվում և վճարվում համախառն եկամտի 10%-ի չափով:

#### Օրինակներ

«Կավ» ՍՊԸ-ն 2008 թ-ի հունվարի 1-ին անցում է կատարել պարզեցված հարկով հարկման դաշտից ընդհանուր կարգով հարկման դաշտ: 2008 թ-ի տարեկան եկամուտը կազմել է 23 մլն դր: 2009 թ-ի մարտ ամսին հայտնի է դարձել, որ ընկերության 2008 թ-ի համար հաշվարկված շահութահարկը կազմել է.

ա) 390 հազ դր:

Այս դեպքում, քանի որ 390 հազ դր-ը փոքր է 460 հազ դր-ից ( $23 \text{ մլն} \times 2\% = 460 \text{ հազ}$ ), ապա 2008 թ-ի համար վճարման ենթակա շահութահարկը կկազմի 460 հազ դր (մինիմում շրջանառության 2%):

բ) 2.7 մլն դր:

Այս դեպքում, քանի որ 2.7 մլն դր-ը մեծ է 2.3 մլն դր-ից ( $23 \text{ մլն} \times 10\% = 2.3 \text{ մլն}$ ), ապա 2008 թ-ի համար վճարման ենթակա շահութահարկը կկազմի 2.3 մլն դր (մաքսիմում շրջանառության 10%):



## 4. «ԵԿԱՍՏԱՅԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Կատարվել են փոփոխություններ նշված օրենքի 21, 23, 29, 29<sup>1</sup>, 31, 31<sup>1</sup>, 37 - հոդվածներում ինչպես նաև ավելացվել է նոր N 31<sup>2</sup> հոդվածը,

### ՀՈԴՎԱԾ 21

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

1. Հարկային գործակալը ֆիզիկական անձին վճարվող եկամտից հարկը պահում (գանձում) է հետևյալ չափերով.

ա) սույն օրենքի 20 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ձևով գրավոր պայմանագիրը չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և Հայաստանում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքում առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար՝ 3% դրույքաչափով, և այլ կազմակերպությունների համար՝ 15% դրույքաչափով, վճարվող եկամտի գումարից՝ առանց հաշվի առնելու սույն օրենքով սահմանված նվազեցումները.

բ) մյուս բոլոր դեպքերում՝ սույն օրենքի 18 հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված դրույքաչափերով՝ սույն օրենքի համաձայն հաշվարկված հարկվող եկամտից:

2. Հարկի պահումը (գանձումը) իրականացվում է յուրաքանչյուր վճարման դեպքում: Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ վճարման դեպքում կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի և հարկի հաշվարկ՝ ելնելով տվյալ վճարման վայրում ընթացիկ հարկային ամսում հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձին կատարված վճարումների ընդհանուր գումարից և անձնական նվազեցումների չափից:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանական անձից առանց հիմնավորող փաստաթղթերի ապրանքներ ձեռք բերելիս, այսպես կոչված, շուկայական գնումների դեպքում բյուջե են վճարում 3 % եկամտահարկ (առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը) և 15% եկամտահարկ (ոչ առևտրային կազմակերպությունները, այսինքն շահույթ չհետապնդող կազմակերպությունները )

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 21. Հարկային գործակալի կողմից վճարած (վճարվող) եկամուտներից հարկի գումարի որոշելը

1. «Բացառությամբ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների, հարկային գործակալը ֆիզիկական անձին վճարվող եկամտից հարկը պահում (գանձում) է հետևյալ չափերով.

ա) սույն օրենքի 20 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ձևով գրավոր պայմանագիրը չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և Հայաստանում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքում կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար՝ 11 տոկոս դրույքաչափով՝ վճարված եկամտի գումարի նկատմամբ՝ առանց հաշվի առնելու սույն օրենքով սահմանված նվազեցումները (բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի).

բ) մյուս բոլոր դեպքերում՝ սույն օրենքի 18 հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված դրույքաչափերով՝ սույն օրենքի համաձայն հաշվարկված հարկվող եկամտից.

գ) սույն կետի «ա» ենթակետում նշված դեպքում կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարներն ազատվում են եկամտահարկը հաշվարկելու և վճարելու պարտավորությունից, եթե կատարված ձեռքբերումները հիմնավորվել են հսկիչ-դրամարկային մեքենաների կտրոններով կամ կրճատ հաշվարկային փաստաթղթերով կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված ձեռքբերումների մասով հարկային մարմիններին սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել են տեղեկություններ (այդ թվում՝ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքի մասով) և այդ տեղեկությունների հավաստիությունը հարկային մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է, իսկ չհիմնավորվելու դեպքում պարտավորությունն առաջանում է տեղեկությունը չհիմնավորված համարվելու վերաբերյալ հարկային մարմիններից գրավոր տեղեկատվության ստացման ամսում:

2. Հարկային գործակալը ֆիզիկական անձին յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներից հարկը պահում (գանձում) է սույն օրենքի 18 հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերով՝ սույն օրենքի համաձայն հաշվարկված հարկվող եկամտից: Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ հաշվարկի դեպքում կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի և հարկի հաշվարկ՝ ելնելով տվյալ ամսում հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձին հաշվարկված աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների ընդհանուր գումարից և անձնական նվազեցման չափից:»:



## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխության հետևանքով իրավաբանական անձիք և անհատ ձեռնարկատերերը առանց հիմնավորող փաստաթղթերի ապրանքներ ձեռք բերելիս, (շուկայական գնումների դեպքում) բյուջե են վճարում 11 % եկամտահարկ, անկախ այն հանգամանքից, թե իրավաբանական անձը առևտրային է, թե ոչ: Սակայն այս դեպքում սահմանվել են բացառություններ: Վերջիններս այդ 11 %-ը չեն վճարի, եթե կատարված ձեռքբերումները հիմնավորվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով կամ կրճատ հաշվարկային փաստաթղթերով կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված ձեռքբերումների մասով հարկային մարմիններին սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել են տեղեկություններ (այդ թվում՝ հաշվարկային փաստաթղթերում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով կատարված գործարքի մասով) և այդ տեղեկությունների հավաստիությունը հարկային մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է: Նշենք նաև, որ չհիմնավորվելու դեպքում պարտավորությունն առաջանում է տեղեկությունը չհիմնավորված համարվելու վերաբերյալ հարկային մարմիններից գրավոր տեղեկատվության ստացման ամսում: Հստակեցվել է նաև հարկային գործակալի կողմից հարկի աճողական պահման սկզբունքը: Այժմ հարկային գործակալը հարկը աճողական կարգով հաշվարկում և պահում է ելնելով տվյալ ամսում ֆիզիկական անձի համար հաշվարկված այլ ոչ թե վճարված եկամուտներից:

## Օրինակներ

«Դուր» ՍՊԸ-ն «Լորդ» ՍՊԸ-ից առանց հիմնավորող փաստաթղթերի ձեռք է բերում 210 հազ դր-ի ապրանք:

Այս դեպքում.

ա) այդ ձեռք բերման համար ընկերությունը չունի ձեռք բերումը հավաստող ոչ մի փաստաթուղթ:

«Դուր» ՍՊԸ-ն կվճարի բյուջե 23.1 հազ դր եկամտահարկ ( $210 \text{ հազ դր} \times 11\% = 23.1 \text{ հազ դր}$ ):

բ) Այդ ձեռք բերման համար ընկերությունը ունի ՀԴՄ կտրոն:

«Դուր» ՍՊԸ-ն բյուջե չի վճարի 11% եկամտահարկ:

գ) Այդ ձեռք բերման համար ընկերությունը ունի կրճատ հաշիվապրանքագիր:

«Դուր» ՍՊԸ-ն բյուջե չի վճարի 11% եկամտահարկ:

դ) «Լորդ» ՍՊԸ-ն հրաժարվել է հաշիվ տրամադրել: Եթե «Դուր» ՍՊԸ-ն սահմանված կարգով տեղեկություն է ներկայացնում հարկային մարմիններին այդ փաստի վերաբերյալ, և վերջիններս հիմնավորում են այն, ապա «Դուր» ՍՊԸ-ն բյուջե չի վճարի 11% եկամտահարկ:



### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հոդված 23. Հարկային գործակալը պահված (զանձված) հարկը բյուջե է վճարում ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բացառությամբ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներից, հարկային գործակալը պահված (զանձված) հարկը բյուջե է վճարում ֆիզիկական անձանց եկամուտների վճարման, իսկ սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետում սահմանված դեպքում՝ պարտավորության առաջացման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ: Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներից պահված (զանձված) հարկը հարկային գործակալը բյուջե է վճարում հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի նոր խմբագրության համաձայն փոփխվել են հարկային գործակալի կողմից պահված հարկը բյուջե վճարելու ժամկետները:

Այժմ հարկային գործակալը հարկը վճարում է մինչև ֆիզիկական անձանց եկամուտ վճարելու ամսվանը հաջորդող ամսի 20-ը, իսկ աշխատավարձից պահված եկամտահարկը մինչև ֆիզիկական անձանց աշխատավարձ հաշվարկելու ամսվանը հաջորդող ամսի 20-ը, անկախ աշխատավարձի վճարված կամ չվճարված լինելու հանգամանքից:





### ՆԱԽԿԻՆՈՒՄ

2. Կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա եկամտահարկի փաստացի գումարի մեկ վեցերորդի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա տասնհինգից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ: Սահմանված ժամկետներում կանխավճարային մուծումներ չկատարելու և օրենքով սահմանված այլ դեպքում հարկային տեսչության մարմիններն այդ կանխավճարային գումարների և դրանց գծով հաշվարկված տույժերի վերաբերյալ պահանջներ են ներկայացնում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Այն հարկատուն, որը նախորդ տարում ունեցել է վնաս, կամ որի նախորդ տարվա եկամտահարկի գումարը չի գերազանցել հիսուն հազար դրամը, կարող է եկամտահարկի հայտարարագիր ներկայացնելուց հետո կանխավճարներ չվճարել: Մինչև նախորդ տարվա փաստացի եկամտահարկի գումարի հաշվարկումը հարկատուն եկամտահարկի կանխավճարները առաջին անգամ (մինչև մարտի 15-ը) կատարում է նախորդ տարվա վերջին՝ կանխավճարի չափից ոչ պակաս:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ ստացող հարկատուն (անհատ ձեռնարկատերը) պարտավոր է կատարել եկամտահարկերի կանխավճարներ՝ սույն հոդվածով սահմանված կարգով: Նաև ձեռնարկատիրական գործունեությունը նոր սկսող հարկատուն կարող է եկամտահարկի կանխավճարներ չկատարել մինչև հաջորդ տարվա հունիսի 15-ը՝ այդ մասին նախօրոք հայտնելով հարկային տեսչության մարմիններ:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 3. Օրենքի 29-րդ հոդվածի՝

ա) 2-րդ մասում «եկամտահարկի փաստացի գումարի» բառերից հետո լրացնել «և (կամ) եկամտահարկի հաշվարկային մեծության» բառերը

բ) 4-րդ մասում «չի գերազանցել 50 հազար դրամը.» բառերը փոխարինել «չի գերազանցել 500 հազար դրամը կամ որը նախորդ տարում օրենքով սահմանված կարգով չի համարվել ԱԱՀ վճարող» բառերը:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ հարկատուն կարող է եկամտահարկի հայտարարագիր ներկայացնելուց հետո կանխավճարներ չվճարել այն դեպքում, երբ նրա նախորդ տարվա եկամտահարկի գումարը չի գերազանցել ոչ թե 50 հազար դրամը, այլ 500 հազար դրամը: Կանխավճարներ կարող է չկատարել նաև այն հարկատուն, որը նախորդ տարում օրենքով սահմանված կարգով չի համարվել ԱԱՀ վճարող:



## ՆԱԽԿԻՆՈՒՄ

3. Նվազագույն եկամտահարկը հաշվարկվում է նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների (բացառությամբ հիմնական միջոցների, ինչպես նաև արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի (բացառությամբ սույն օրենքի 11 հոդվածով սահմանված) իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի (որը չի ներառում նշված եկամուտների ստացման համար վճարած անուղղակի հարկերը) և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50 տոկոսը չզերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 4. Օրենքի 29<sup>1</sup>-րդ հոդվածի 3-րդ մասում՝

ա) «տարբերության նկատմամբ» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքերի» բառերը,

բ) լրացնել նոր նախադասություն՝ հետևալ բովանդակությամբ

«Ընթացիկ տարում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարվող հարկատուները ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում նվազագույն եկամտահարկը հաշվարկում են սույն կետին համապատասխան հաշվարկված եկամտից՝ առանց հաշվի առնելու հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումները:»:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ 2009 թ-ի հունվարի մեկից հետո, ի տարբերություն ԱԱՀ վճարողների, ԱԱՀ վճարող չհամարվողները ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում նվազագույն եկամտահարկը հաշվարկում են իրացման շրջանառությունից (առանց ԱԱՀ), առանց նվազեցնելու ամորտիզացիոն մասհանումները:



## ՆԱԽԿԻՆՈՒՄ

1. Հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են իրենց բնակության (հաշվառման) վայրի հարկային մարմնին ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով իրենց տարեկան եկամուտների մասին հաշվարկ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերի:

2. Հաշվարկ կարող են չներկայացնել այն հարկատուները, ովքեր հարկային տարվա ընթացքում ստացել են.

.....  
դ) հարկային տարվա ընթացքում 250,000 դրամը չզերազանցող համախառն եկամուտ, որից հարկային գործակալի կողմից հարկի պահում չի իրականացվել.

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 5. Օրենքի 31-րդ հոդվածի

1) 1-ին մասում «եկամուտների մասին հաշվարկ,» բառերից հետո լրացնել «իսկ ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված հարկատուները՝ եկամուտների պարզեցված հաշվարկ,» բառերը:

2) 2-րդ կետի «դ» ենթակետում «250,000» թիվը փոխարինել «300,000» թվով:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված հարկատուները ներկայացնում են ոչ թե տարեկան հայտարարագիր, այլ եկամուտների պարզեցված հաշվարկ: Ինչպես նաև բարձրացվել է ֆիզիկական անձի կողմից ( առանց հարկային գործակալի կողմից հարկի պահման) չհայտարարագրվող եկամտի չափը՝ տարեկան 250 հազարից մինչև 300 հազար:



Նախկինում  
չի եղել

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հողված 6. Օրենքի 31<sup>1</sup>-րդ հոդվածից հետո լրացնել նոր 31<sup>2</sup>-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հողված 31<sup>2</sup>. Առանձին հարկ վճարողների 2008 և 2009 թվականների եկամտահարկը

2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2008 թվականի վճարման ենթակա եկամտահարկը, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ 2009 թվականի վճարման ենթակա եկամտահարկը չի կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2 տոկոսից և ավել՝ համախառն եկամտի 10 տոկոսից: Սույն հոդվածին համապատասխան վճարված գումարները համարվում են այդ տարիների համար եկամտահարկի վերջնական գումարներ:»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ զուգահեռներ է տարված շահութահարկի օրենքի հետ: Այսինքն՝ 2008 և 2009թթ-երին եկամտահարկի վերջնական, տարեկան գումարը չի կարող գերազանցել համախառն եկամտի 10%-ը և չի կարող պակաս լինել, քան համախառն եկամտի 2%-ը:



## ՆԱԽԿԻՆՈՒՄ

1. Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմիններին Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության սահմանած ձևով գրավոր տեղեկություններ ներկայացնել անցած եռամսյակում ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների և այդ եկամուտներից պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին: Նշված տեղեկությունները վերահասցեագրվում են եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց բնակության (հաշվառման) վայրի հարկային մարմիններին:

3. Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (այդ թվում գործատուն) պարտավոր է եռամսյակը մեկ, հաջորդ եռամսյակի երկրորդ ամսի 1-ից ոչ ուշ իր գտնվելու հարկային մարմին Հայաստանի Հանրապետության հարկային տեսչության կողմից սահմանված ձևով ներկայացնել հաշվարկ՝ անցած եռամսյակի յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են տարին մեկ՝ հաջորդ տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ, իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին ներկայացնել օրենսդրությամբ սահմանված ձևով և կարգով անվանական տեղեկություններ՝ անցած տարում իրենց կողմից ֆիզիկական անձանց վճարած եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների, այդ եկամուտներից պահված (գանձված) և բյուջե փոխանցված հարկի գումարների մասին: Անվանական տեղեկություններ չեն ներկայացվում, եթե ֆիզիկական անձանց վճարված եկամուտները չեն գերազանցում սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված չափի 12-ապատիկը:

Նշված տեղեկությունները մշակվում են հարկային տեսչության կողմից և վերահասցեագրվում են եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց բնակության (հաշվառման) վայրի հարկային մարմիններին:»:

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմին ներկայացնել օրենսդրությամբ սահմանված ձևով հաշվարկ՝ անցած եռամսյակի յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված (աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկված) եկամուտների, պահված և բյուջե փոխանցված հարկի գումարների մասին:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից, իսկ Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նորմերը կիրառվում են «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ դրանց կիրառման ժամկետներից սկսած:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են ոչ թե եռամսյակը մեկ ,այլ տարեկան մեկ անգամ տեղեկություններ ներկայացնել հարկային տեսչություն, անցած տարում իրենց կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների մասին անվանական, այսինքն այդ տեղեկություններում պետք է նշված լինեն յուրաքանչյուր ֆիզ անձին վճարված գումարներն առանձին-առանձին, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեները, այդ եկամուտներից պահված (գանձված) և բյուջե փոխանցված գումարները: Տեղեկությունները ներկայացվում են յուրաքանչյուր տարվա համար, նրան հաջորդող տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ:

Նաև կատարված փոփոխության համաձայն տնտեսվարող սուբյեկտները որպես հարկային գործակալ եկամտահարկի եռամսյակային հաշվետվությունները կազմելուց աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները արտացոլելու են ոչ թե ըստ վճարման այլ ըստ հաշվարկման:



5. «ՊԱՐԶԵՑՎԱԾ ԶԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԶՅ ՕՐԵՆՔՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԳԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԶՅ ՕՐԵՆՔԸ

## ՅՈՂՎԱԾ 1

Ուժը կորցրած ճանաչել «Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 05.06.2000թ. ՀՕ-61 օրենքը:

## ՅՈՂՎԱԾ 2

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով վերացվում է «Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:



## 6. «ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ ԿՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

### ՀՈԴՎԱԾ 1

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 26 դեկտեմբերի 1997 թվականի ՀՕ-179 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասում՝

ա) «Անհատ» բառը փոխարինել «Բացառությամբ հարկային օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ վճարող չհամարվողների և եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճար վճարողների անհատ» բառերով.  
բ) առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով՝  
«ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) սոցիալական վճարումները կատարում են սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի տարեկան չափի նկատմամբ 3% դրույքաչափով:»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ ԱԱՀ վճարող չհամարվող և հաստատագրված վճար վճարող հանդիսացող անհատ ձեռնարկատերերը սոցիալական վճարումները կատարում են հետևյալ կերպ. հաշվարկում են տարեկան իրացման շրջանառությունը, դրանից նվազեցնում են եկամտահարկի մասին ՀՀ օրենքի համաձայն նվազեցվող ծախսերը: Հաշվարկում են ստացված գումարի 3 %-ը:

### ՀՈԴՎԱԾ 2

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Նախորդ եռամսյակի յուրաքանչյուր ամսում մինչև հինգ (ներառյալ) վարձու աշխատող ունեցող գործատուները ընթացիկ եռամսյակի համար լիազորված մարմին են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ձևով սոցիալական վճարների եռամսյակային հաշվետվություն (ամսական կտրվածքով)՝ մինչև այդ եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 20-ը (ներառյալ): Նախորդ եռամսյակի որևէ ամսում 5-ից ավել վարձու աշխատող ունեցող գործատուները ընթացիկ եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար լիազորված մարմին են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ձևով սոցիալական վճարների ամսական հաշվետվություն, մինչև տվյալ ամսվա հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ): Սոցիալական վճարների հաշվետվությունները լիազորված մարմին ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով:»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն սույն փոփոխության այն կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց վարձու աշխատողների քանակը նախորդ եռամսյակի յուրաքանչյուր ամսում չի գերազանցել հինգը ներկայացնում են եռամսյակային սոց.հաշվետվություններ, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, իսկ եթե եռամսյակային հաշվետվություն ներկայացնելուց հետո, ընթացիկ եռամսյակի որևէ ամսվա մեջ աշխատողների քանակը գերազանցում է հինգը, ապա հաջորդ եռամսյակից սկսած տնտեսվարող սուբյեկտները ներկայացնում են ամսական սոց. հաշվետվություններ, մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

### ՀՈԴՎԱԾ 3

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից: 2008 թվականի ընթացքում պարզեցված հարկ վճարողները, հաստատագրված վճար վճարողները, ինչպես նաև «Պարզեցված հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունների հետևանքով 2008 թվականի հունվարի 1-ից պարզեցված հարկից ընդհանուր հարկման կարգին անցած հարկ վճարողները սույն օրենքի 1-ին հոդվածի դրույքների համաձայն կարող են կատարել համապատասխան վերահաշվարկներ:



## 7. «ԱՆՅԱՏ ԶԵՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԶԱՄԱՐ ԵԿԱՄՏԱԶԱՐԿԻ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱԶՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՑԱՐՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԶՅ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ԶՅ ՕՐԵՆՔԸ

### ՀՈՂՎԱԾ 1

«Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության 11 նոյեմբերի 2005 թվականի ՀՕ-215-Ն օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված արտոնություններից օգտվելու իրավունք ունեցող անհատ ձեռնարկատերերը, որոնք մինչև սույն օրենքը ուժի մեջ մտնելը դեռևս չեն օգտվել այդ արտոնություններից, կարող են օգտվել Օրենքով իրենց վերապահված արտոնություններից՝ առանց ժամկետային սահմանափակման:

### ՀՈՂՎԱԾ 2

Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված իրավունքից օգտվելու համար անհատ ձեռնարկատերը պարտավոր է ներկայացնել գրավոր դիմում իր հաշվառման (գրանցման) վայրի հարկային տեսչության մարմին:

Այդ դեպքում՝

- ա) Օրենքով նախատեսված ցանկերի կազմման, ներկայացման և հրապարակման նկատմամբ սահմանված ժամկետները չեն կիրառվում.
- բ) 2006 թվականի հունվարի 1-ից հետո այդ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հաշվարկված և չվճարված հարկային ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների պարտավորությունները (ապառք, տույժ, տուգանք) ենթակա են վերահաշվարկման այնպես, իբրև Օրենքը կիրառվել է 2006 թվականի ընթացքում.
- գ) այդ անհատ ձեռնարկատերը չի ենթարկվում վարչական պատասխանատվության՝ Օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու հնարավորություն ունենալու և այդ արտոնությունից չօգտվելու հետևանքով:

### ՀՈՂՎԱԾ 3

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ անհատ ձեռնարկատերերը կարող են լուծարվել առանց որևէ պատժամիջոցների: Այսինքն հանվել է անհատ ձեռնարկատերերի արտոնությունից օգտվելու համար օրենքով սահմանված ժամկետային սահմանափակումը: Միաժամանակ, առաջարկվում է վերահաշվարկել 2006 թվականի հունվարի 1-ից հետո անհատ ձեռնարկատերերի նկատմամբ հաշվարկված և չվճարված հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով առկա պարտավորությունները, իսկ անհատ ձեռնարկատերերին չենթարկել վարչական պատասխանատվության՝ օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու հնարավորություն ունենալու, սակայն դրանցից չօգտվելու համար:

Ի վերջո, փաստացի գործունեություն չիրականացնող անհատ ձեռնարկատերերը լրացուցիչ հնարավորություն են ստացել՝ օգտվելու 2003-2005 թվականների համար հաշվարկված և չվճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարներից, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված և չվճարված տույժերի վճարման պարտականությունից:





## 8. «ՀՅԱԿԻՉ-ԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ

### ՀՈԴՎԱԾ 1

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 22-ի ՀՕ-129-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասը «մանրածախ վաճառք» բառերից առաջ լրացնել «առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով» բառերով:

### ՀՈԴՎԱԾ 2

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի (22 նոյեմբերի 2004 թվականի, ՀՕ-129-Ն) Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա) 1-ին պարբերությունում «հարյուր հիսուն հազար» բառերը փոխարինել «երեք հարյուր հազար» բառերով.

բ) 2-րդ պարբերությունում «երեք հարյուր հազար» բառերը փոխարինել «վեց հարյուր հազար» բառերով.

2) 2-րդ մասի՝

ա) 1-ին պարբերությունում «յոթանասունհինգ հազար» բառերը փոխարինել «հարյուր հիսուն հազար» բառերով.

բ) 2-րդ պարբերությունում «հարյուր հիսուն հազար» բառերը փոխարինել «երեք հարյուր հազար» բառերով.

գ) 3-րդ պարբերությունում «երեք հարյուր հազար» բառերը փոխարինել «վեց հարյուր հազար» բառերով:

### ՀՈԴՎԱԾ 3

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից, իսկ սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանվող փոփոխությունները ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվողների մասով ուժի մեջ են մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Փոփոխության նպատակը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների խստացումն է: Այսինքն՝ մեկ տարվա ընթացքում խախտումն արձանագրելու առաջին դեպքում կիրառվում է հարյուր հիսուն հազար դրամ տուգանք, երկրորդ անգամ՝ երեք հարյուր հազար դրամ, երրորդ անգամ՝ վեց հարյուր հազար դրամ:

Ընդ որում նշենք, որ տուգանքի չափերի մեծացումը 2008 և 2009թթ. ընթացքում չի տարածվում ԱԱՀ վճարող չհամարվողների վրա:

Իսկ մանրածախ առևտրի կետերից բացի այլ վայրերի մատնանշումը կապված է տոնավաճառներում և համանման վայրերում հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման պրոցեսին սույն Օրենքի համահունչ և կիրառելի լինելու հետ:



## 9. «ՋԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ԶԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ԶԳ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԶԳ ՕՐԵՆՔԸ

### ՅՈՂՎԱԾ 1

«Հաշվապահական հաշվառման մասին» ԶԳ 26.12.2002թ. ԶՕ-515-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով՝  
«Առանձին հարկ վճարողների համար ԶԳ կառավարության կողմից կարող են սահմանվել հաշվապահական հաշվառման առանձին ստանդարտ (ստանդարտներ):»:

### ՅՈՂՎԱԾ 2

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ ԶԳ կառավարությանը իրավասություն է վերապահվում առանձին հարկ վճարողների համար սահմանելու հաշվապահական հաշվառման առանձին ստանդարտներ:



## 10. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

1-ին հոդված 3-րդ կետ իններորդ պարբերություն

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հարկային մարմինների կողմից հաշվեգրվող հարկերի մասով տնտեսավարող սուբյեկտի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա գումարների որոշման, տվյալ հարկատեսակի հաշվանցումների ճշտության արձանագրման (այսուհետ՝ սույն օրենքի իմաստով հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի), պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի հիմնավորվածության, օրենքով սահմանված կարգով ներկայացվող տեղեկությունների ճշտության արձանագրման, հսկիչ գնումների իրականացման, Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերի դրույթներին համապատասխան՝ օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտների կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից գանձած հարկի գումարը վերադարձնելու նպատակով հարկային մարմինները կարող են իրականացնել ուսումնասիրություններ:

Սույն կետի իններորդ պարբերությամբ սահմանված ուսումնասիրությունների անցկացման ընթացակարգերը (այսուհետ՝ ուսումնասիրությունների անցկացման կարգերը) սահմանվում են սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածներով:

Սույն օրենքի հավելվածներով սահմանվում են՝

- 1) .....
- 2) .....
- 3) .....

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ կետում՝

1) իններորդ պարբերությունը «վերադարձնելու» բառից հետո լրացնել «, արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) չափագրման» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով.

«4) տնտեսավարող սուբյեկտների մոտ արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) չափագրման իրականացման կարգը՝ համաձայն 4-րդ հավելվածի»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հավելված N4-ով՝ համաձայն հավելվածի:

Հավելված  
«Հայաստանի Հանրապետությունում  
ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ  
կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի

Հավելված N4  
«Հայաստանի Հանրապետությունում  
ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի



## ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՈՏ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԿԱՐ ԶԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՅԱՆՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԳՆԵՐԻ (ՍԱԿԱԳՆԵՐԻ) (ԱՅԴ ԹՎՈՒՄ` ՄԻՋԻՆ) ՉԱՓԱԳՐՄԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հարկային մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտների մոտ արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման (այդ թվում` օգտակար հանածոյի լեռնային զանգվածից հանքարտադրատեսակի հիմնական և ուղեկից բաղադրիչների ելքի) և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում` միջին) չափագրման (այսուհետ` չափագրում) իրականացման կարգը:

2. Չափագրում է համարվում հարկային մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցչի անմիջական մասնակցությամբ (անհրաժեշտության դեպքում ներգրավելով լիազոր պետական կառավարման համապատասխան մարմնի ներկայացուցչի կամ անկախ փորձագետի) իրականացվող ուսումնասիրությունը, որի նպատակն է պարզել`

- 1) օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները չներկայացնելու դեպքում արտադրանքի արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման իրական ծավալները, ինչպես նաև իրացման փաստացի գները (սակագները).
- 2) տնտեսավարող սուբյեկտի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված հաշվետվություններում, ներառյալ` դրանց համար հիմք հանդիսացած հաշվապահական, արտադրատեխնոլոգիական փաստաթղթերում և այլ ներքին հաշվառման տվյալներում (այսուհետ` հաշվետվություններում) ներառված արտադրանքի արտադրության (այդ թվում` ծախսումների և կորուստների), օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման իրական ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների (սակագների) ճշտությունը:

3. Տնտեսավարող սուբյեկտների մոտ սույն կարգին համապատասխան չափագրումներն իրականացվում են հարկային մարմնի ղեկավարի հրապարակած հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են չափագրման հիմքերը, նպատակը, տնտեսավարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), չափագրում իրականացնելու վայրը, ժամկետները և չափագրում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձանց, լիազոր պետական կառավարման համապատասխան մարմնի ղեկավարի հրապարակած հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա չափագրմանը ներգրավված ներկայացուցչի կամ հարկային մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով չափագրմանը ներգրավված անկախ փորձագետի տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)` վավերացված հարկային մարմնի կնիքով:

4. Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը չափագրումը փաստացի սկսելու օրը տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին): Վերջինս պարտավոր է ստորագրել մեկ օրինակի վրա` հաստատելով, որ ծանուցված է չափագրում իրականացնելու մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է այն ներկայացնող պաշտոնատար անձանց: Հրամանում կամ հանձնարարագրում նշված օրը չափագրումը սկսելու կամ փաստացի սկսված չափագրումն ավարտելու անհնարինության դեպքում (գործունեության ժամանակավոր դադարեցման, տեխնիկական պատճառներով առաջացած պարապրոդների, գործադուլների, բնակլիմայական անբարենպաստ պայմանների և համանման այլ հանգամանքների հետևանքով) չափագրումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում են նաև տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց կողմից: Նշված դեպքերում չափագրումը փաստացի սկսվում կամ շարունակվում է տնտեսավարող սուբյեկտի բնականոն գործունեությունը վերսկսվելուց հետո, որի մասին տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը) պարտավոր է հայտնել չափագրումն իրականացնող հարկային մարմնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին կամ հարկային տեսչության պետին: Նշված հիմքերով չափագրման ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածը չի ներառվում հրամանով կամ հանձնարարագրով չափագրման իրականացման համար սահմանված ժամանակահատվածի մեջ:

Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց կողմից սույն կարգին համապատասխան իրականացվող չափագրման աշխատանքներին խոչընդոտելու, հարկային մարմնի պաշտոնատար անձանց պահանջով գույքագրումներ իրականացնելուց կամ չափագրման նպատակներին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվելու դեպքերում չափագրումն իրականացնող պաշտոնատար անձինք կազմում են արձանագրություն, որը հիմք է տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց նկատմամբ օրենքով սահմանված պատասխանատվության կիրառման, իսկ օգտակար հանածոների արդյունահանման դեպքում` օրենքով սահմանված կարգով գզուշացման և հանքային իրավունքի դադարեցման համար:

5. Տնտեսավարող սուբյեկտի մոտ տվյալ ֆինանսական տարում իրականացվող բոլոր չափագրումների ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 աշխատանքային օրը: Մեկ չափագրումը կարող է իրականացվել տնտեսավարող սուբյեկտի կողմից սահմանված երկուսից մինչև հինգ աշխատանքային օրերի ընթացքում:

6. Ընդգծված սեզոնայնություն ունեցող ապրանքների արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման, դրանց շրջանառության ֆիզիկական ծավալների չափագրումների արդյունքները տարեկան կտրվածքով կիրառելու



համար դրանք տվյալ ֆինանսական տարվա ընթացքում հավասար համամասնությամբ պարտադիր իրականացվում են համապատասխան սեզոնի և սեզոնից դուրս ժամանակահատվածի ընթացքում, և այդ կարգով իրականացված չափագրումների արդյունքները համապատասխան հաշվետու ժամանակահատվածների մասով միջինացվում են: Սույն կարգի կիրառման նպատակով առանձին ապրանքատեսակների արտադրության և իրացման սեզոնայնության չափանիշները և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Օգտակար հանածոների արդյունահանման ֆիզիկական ծավալների չափագրման ընթացքում լիազոր պետական կառավարման համապատասխան մարմնի ներկայացուցչին կամ անկախ փորձագետին ներգրավելու դեպքում նրանք չափագրմանը կարող են մասնակցել միայն լիազոր պետական կառավարման համապատասխան մարմնի ղեկավարի հրամանը կամ հարկային մարմնի ղեկավարի հրամանի կամ հանձնարարագրի համապատասխան լրացումը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին) ծանոթացնելուց անմիջապես հետո:

Օգտակար հանածոների արդյունահանման ֆիզիկական ծավալների չափագրումների իրականացման նպատակով բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների (սահմանափակումների) ստուգում իրականացնող լիազոր մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հարկային մարմիններին են տրամադրում վերջին (նախորդ) ստուգման արդյունքում արձանագրված ելակետային տվյալները (համապատասխան կողողինատային միջերով): Սույն կարգով իրականացված չափագրումների արդյունքում արձանագրված ելակետային տվյալները (համապատասխան կողողինատային միջերով) հարկային մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տրամադրում են բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների (սահմանափակումների) ստուգում իրականացնող լիազոր մարմիններին՝ ստուգումների իրականացման ժամանակ կիրառելու նպատակով:

8. Չափագրման արդյունքներն արտացոլվում են երկու օրինակից կազմվող արձանագրությունում, որը պարտավոր են ստորագրել չափագրումն իրականացրած հարկային մարմնի և տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը), չափագրմանը ներգրավված լիազոր պետական կառավարման համապատասխան մարմնի պաշտոնատար անձինք կամ անկախ փորձագետները: Չափագրման արդյունքում կազմված արձանագրության ձևը սահմանվում է հարկային մարմնի ղեկավարի հրամանով: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (կամ ի պաշտոնե նրան փոխարինելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին) չափագրումն ավարտելուն հաջորդող 3 աշխատանքային օրերի ընթացքում: Արձանագրության օրինակը ստանալուց կամ այն ստորագրելուց հրաժարվելու դեպքում չափագրումն իրականացրած պաշտոնատար անձինք այդ մասին համապատասխան նշում են կատարում արձանագրությունում և այն ուղարկում տնտեսավարող սուբյեկտին պատվիրված նամակով: Չափագրման ընթացքի կամ արդյունքների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք այդ մասին նշում են կատարում արձանագրության հարկային մարմնում պահվող օրինակում, իսկ գրավոր առարկությունները հարկային մարմին սահմանված կարգով ներկայացվում են չափագրման արձանագրությունը տնտեսավարող սուբյեկտին հանձնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրերի ընթացքում: Նշված ժամանակահատվածում գրավոր առարկություններ չներկայացնելու, ինչպես նաև չափագրման արձանագրության օրինակը ստանալուց կամ այն ստորագրելուց հրաժարվելու դեպքերում չափագրման արձանագրված տվյալները համարվում են անառարկելի: Տնտեսավարող սուբյեկտները չափագրում իրականացրած պաշտոնատար անձանց կամ անկախ փորձագետների գործողությունները բողոքարկում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

9. Չափագրման արդյունքներով կազմված արձանագրությունները ժամանակագրական կարգով կարվում և պահվում են տնտեսավարող սուբյեկտի հարկային գործում: Օրենքով սահմանված դեպքերում արձանագրությունների տվյալների կիրառմամբ տնտեսավարող սուբյեկտի հարկային և բնօգտագործման վճարների պարտավորությունների հաշվարկը կատարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացվող բյուջեի հետ փոխհարաբերությունների հերթական ստուգման (կամ վերստուգման) ընթացքում:

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքում նախատեսվում է ենթակետ և հավելված տնտեսավարող սուբյեկտների մոտ արտադրության, օգտակար հանածոների արդյունահանման և իրացման, ապրանքաշրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների չափագրումներ անցկացնելու համար իրավական հիմքեր և հստակ մեխանիզմներ ներդնելու համար:



## ՀՈԴՎԱԾ 2

«ՀՀ-ում օրենքի ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ 17.05.2000թ. ՀՕ-60 օրենքի (այսուհետ Օրենք)

3-րդ հոդվածի 3-րդ մասում «հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների,» բառերից հետո լրացնել «հարկ վճարողների կողմից «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «թ» կետով սահմանված՝ հայտարարության փակցման և դրանում պահանջվող տեղեկությունների ներառման» բառերը:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ առանց 3 օր առաջ զգուշացման հարկային մարմինները կարող են ստուգումներ անցկացնել նաև այն դեպքում, երբ ստուգում են, թե արդյոք տնտեսվարող սուբյեկտի մոտ փակցված է հայտարարություն՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի «թ» կետի համաձայն սահմանված՝ պահանջվող տեղեկությունների ներառմամբ: Այսինքն՝ փակցված է արդյոք հայտարարություն՝ ներառելով հարկ վճարողի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը), հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության տվյալ վայրի հասցեն և տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները):

## ՀՈԴՎԱԾ 4

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:



## 12. «ՂԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԿՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ

Կատարվել են փոփոխություններ նշված օրենքի 5, 6, 7, 22, 25<sup>1</sup>, 25<sup>2</sup> հոդվածներում

### ՀՈՂՎԱԾ 5

#### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հոդված 5. Հարկային արտոնությունների կասեցումը.

Վճարողների համար սույն օրենքով նախատեսված գործունեության տեսակների մասով կասեցվում են ավելացված արժեքի հարկի և շահութահարկի (եկամտահարկի) գծով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունները, ինչպես նաև հաշվի չեն առնվում այդ հարկատեսակների գծով նվազեցումները և հարկ վճարող համարվելու համար հիմք ընդունող սահմանները:

#### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի համաձայն հաստատագրված վճար վճարողների վրա չէին տարածվում ԱԱՀ-ի և (կամ) շահութահարկի (եկամտահարկի) օրենքներով սահմանված արտոնությունները, նվազեցումները և այդ հարկի ազդեցության ոլորտի տակ ընկնելու համար սահմանված չափերը:

#### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-236 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածում «ինչպես նաև» բառերը փոխարինել «ինչպես նաև հաստատագրված վճարի հաշվարկման համար» բառերով:

#### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխության նպատակը հետևյալն է.

Քանի որ ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխությունների համաձայն մտցվում է նոր հարկ վճարողների կատեգորիա, ԱԱՀ վճարող չհամարվողներ, որոնց շարքին դասվելու առաջին պահանջը տարեկան իրացման շրջանառությունն է (որի մեջ հաշվի է առնվում նաև հաստատագրված վճարով հարկվող շրջանառությունը), ուստի վերոհիշյալ հոդվածում առաջացավ փոփոխություն անելու անհրաժեշտություն՝ ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքին համաձայնեցնելու համար:



## ՀՈՂՎԱԾ 6

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հոդված 10. Հաստատագրված վճարի կառուցվածքը.

Հաստատագրված վճարի գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով՝ բացառությամբ սույն օրենքի 7 հոդվածի «ժէ» ենթակետով նախատեսված գործունեության տեսակների, որոնց համար ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 0 տոկոս:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի իմաստը կայանում է նրանում, որ հարկ եղած դեպքում (օրինակ երբ հաստատագրված վճարով աշխատող հարկատուն անցնում է ընդհանուր հարկման դաշտ(ԱԱՀ և/կամ շահութահարկ/եկամտահարկ) ապա նրա հաստատագրված վճարի գծով ունեցած կանխավճարի 60 տոկոսը տեղափոխվում է որպես ԱԱՀ-ի գծով կանխավճար), հարկ վճարողի հաստատագրված վճարի գերավճարը այլ հարկատեսակների գծով կանխավճարների տրոհելուց ԱԱՀ-ի բաժինը ընդունվի ընդհանուր գեումարի 60 տոկոսի չափով, իսկ եթե նա զբաղվում է վիճակախաղերի կազմակերպմամբ ապա այդ բաժինը ընդունվի 0 տոկոս:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում «տեսակների, որոնց» բառերը փոխարինել «տեսակի, ինչպես նաև սահմանային չափը գերազանցելու դեպքերում ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվողների» բառերով:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխությամբ սահմանվեց, որ այն հաստատագրված վճարով աշխատող այն հարկատուների, որոնք դուրս են գալիս ընդհանուր հարկման դաշտ (այսինքն գերազանցում են իրենց համար հաստատագրված վճարների մասին ՀՀ օրենքով տվյալ գործունեության մասով նախատեսված սահմանային չափը՝ դառնալով ԱԱՀ և/կամ շահութահարկ/եկամտահարկ վճարող), բայց մինչև ժամանակ բավարարում են ԱԱՀ վճարող չհամարվող լինելու համար սահմանված պահանջներին, պետ բյուջեի նկատմամբ ունեցած կանխավճարը այլ հարկային պարտավորությունների տրոհելուց, ինչպես և վիճակախաղերի կազմակերպմամբ զբաղվող հարկատուների մոտ ԱԱՀ-ի բաժինն ընդունվում է 0 տոկոս:





## ՀՈԴՎԱԾ 7

2-րդ, 2<sup>1</sup>-րդ - 3-րդ

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հոդված 7. Հարկվող օբյեկտը

Հաստատագրված վճարի հարկվող օբյեկտ են համարվում գործունեության հետևյալ տեսակները՝

ա) առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող՝ Երևան քաղաքում 7 քառակուսի մետր, այլ վայրերում՝ 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեությունը (այսուհետ՝ խանութների, կրպակների (տաղավարների) առևտրական գործունեությունը)։

ա1) առևտրի իրականացման վայրերում գտնվող՝ Երևան քաղաքում՝ 7 քառակուսի մետր, այլ վայրերում՝ 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող տաղավարների, կրպակների միջոցով առևտրական գործունեությունը (այսուհետ՝ առևտրի իրականացման վայրերում առևտրական գործունեությունը)։

բ) առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը։

ԳԼՈՒԽ 2. խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով իրականացվող առևտրական գործունեության համար հաստատագրված վճարները

ԳԼՈՒԽ 2<sup>1</sup>. առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեության համար հաստատագրված վճարը

ԳԼՈՒԽ 3. առևտրի իրականացման վայր կազմակերպելու համար հաստատագրված վճարները

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Օրենքի 7-րդ հոդվածով սահմանվում են այն գործունեության տեսակները, որոնց իրականացումը, համապատասխան պահանջների բավարարման դեպքում, կարող է հարկվել հաստատագրված վճարով: Իսկ համապատասխան գլուխներով սահմանվում են վերոհիշյալ հոդվածով թվարկված յուրաքանչյուր գործունեության տեսակի համար հաստատագրված վճարի հաշվարկման կարգը, սահմանային չափը և այլ առանձնահատկությունները:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հոդված 6. 2010 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել օրենքի 7-րդ հոդվածի «ա», «ա<sup>1</sup>», «բ» ենթակետերը, 2-րդ, 2<sup>1</sup>-րդ և 3-րդ գլուխները:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն փոփոխության համաձայն 2010 թվականի հունվարի 1-ից առևտրի իրականացման վայրերից դուրս ինչպես նաև առևտրի վայրերում գտնվող՝ Երևան քաղաքում 7 քառակուսի մետր, այլ վայրերում՝ 10 քառակուսի մետր առևտրական տարածքը չգերազանցող խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեությունը և առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը դուրս են գալիս հաստատագրված վճարի հարկման դաշտից ընդհանուր հարկման դաշտ (ԱԱՀ և/կամ շահութահարկ/եկամտահարկ): Այդ իկ պատճառով ուժը կորցրած են ճանաչվում 7-րդ հոդվածի «ա», «ա<sup>1</sup>», «բ» ենթակետերը և դրանց համապատասխանող 2-րդ, 2<sup>1</sup>-րդ և 3-րդ գլուխները:



### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հողված 22. Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճար վճարողները.

.....

3. Սույն գլխի դրույթների գործունեությունը չի տարածվում՝

ա) այն հարկ վճարողների վրա, որոնց կողմից եռամսյակի ընթացքում (անկախ գործունեության իրականացման օրերի թվից) առևտրական տարածքի 1 քառակուսի մետրի հաշվով ապրանքաշրջանառության ծավալը գերազանցում է 1200,0 հազար դրամը (սահմանային չափը, ընդ որում, նշված չափը վերաբերում է հարկ վճարողի բոլոր կրպակների, տաղավարների և այլ վաճառատեղերի միջոցով իրականացվող գործունեությունից ստացված շրջանառության ընդհանուր գումարին):

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածով սահմանվում է ապրանքաշրջանառության սահմանային չափի առևտրի իրականացման վայրերից դուրս խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնող՝ հաստատագրված վճարով աշխատող հարկ վճարողների համար, այսինքն եռամսյակի ընթացքում մեկ քառակուսի մետր առևտրային տարածքի վրա բաժին ընկնող գումարի առավելագույն չափը, որը գերազանցելու դեպքում հարկատուին դուրս է գալիս հաստատագրված հարկման դաշտից հարկման ընդհանուր դաշտ (ԱԱՀ և/կամ շահութահարկ/եկամտահարկ):

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հողված 3. Օրենքի 22-րդ 3-րդ մասի «ա» ենթակետում «1200,0» թիվը փոխարինել «2100,0» թվով:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս փոփոխությամբ բարձրացվեց սահմանային չափը վերոհիշյալ գործունեության տեսակի համար: Այսինքն այժմ հաստատագրված վճարով աշխատող հարկատուները կարող են շարունակել մնալ այդ հարկման դաշտում ավելի մեծ իրացման շրջանառության դեպքում:

### Օրինակներ

Անհատ ձեռնարկատերը Երևան քաղաքում գտնվող 7 քառակուսի մետր առևտրական տարածք զբաղեցրող խանութի միջոցով իրականացնում է առևտրական գործունեություն: 2008 թվականի առաջին եռամսյակում նրա խանութի միջոցով իրականացված ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը կազմել է 10.5 մլն դրամ: Այս դեպքում տվյալ անհատ ձեռնարկատերը գերազանցել է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված սահմանային չափը (10500/7=1500 հազար դրամ, որն ավելին է, քան 1200 հազար դրամ սահմանային չափը): Ուստի, 2008 թվականի առաջին եռամսյակում տվյալ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը պետք է հարկվի ավելացված արժեքի հարկով և (կամ) եկամտահարկով:

Եթե տվյալ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը 2009 թվականի առաջին եռամսյակում բնութագրվի 2008 թվականի առաջին եռամսյակի նույն ցուցանիշներով, ապա «Հաստատագրված վճարների մասին օրենքում» օրենսդրական փոփոխությունների չկատարման պարագայում տվյալ անհատ ձեռնարկատերը կգերազանցեր հաստատագրված վճար վճարող համարվելու համար նախատեսված սահմանային շեմը և հետևաբար, կտևափոխվեր հարկման ընդհանուր դաշտ: Բայց քանի որ նրա ընդհանուր տարեկան ապրանքաշրջանառությունը ( $4 \times 10.5 = 42$  մլն դրամ, ենթադրվում է, որ այն հավասարաչափ է բաշխված տարվա եռամսյակների միջև) չի գերազանցում ավելացված արժեքի հարկով չհարկվող նվազագույն շեմը (58.35 մլն դրամ՝ հաշվի առնելով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները), տվյալ անհատ ձեռնարկատերը կվճարի միայն եկամտահարկ: Մինչդեռ կատարված փոփոխությունների արդյունքում տնտեսավարողները հաստատագրված վճար վճարող համարվելու համար նախատեսված նոր սահմանային շեմը (2100 հազար դրամ) գերազանցելով՝ միաժամանակ կգերազանցեն նաև ավելացված արժեքի հարկով չհարկվող նվազագույն շեմը ( $2100 \times 7 \times 4 = 58.8$  մլն, որն ավելին է, քանի չհարկվող շեմը 58.35 մլն դրամի չափով), և հետևաբար նրանց համար հաստատագրված վճար կփոխարինվի ավելացված արժեքի հարկով և (կամ) եկամտահարկով (շահութահարկով):



## ՀՈՂՎԱԾ 25՝

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հողված 25՝. Առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեության համար հաստատագրված վճար վճարողները.

.....

2. Սույն գլխի դրույթների գործողությունը չի տարածվում՝

ա) այն հարկ վճարողների վրա, որոնց կողմից եռամսյակի ընթացքում (անկախ գործունեության իրականացման օրերի թվից) առևտրական տարածքի 1 քառակուսի մետրի հաշվով ապրանքաշրջանառության ծավալը գերազանցում է 1200,0 հազար դրամը (սահմանային չափը), իսկ ոսկերչական արտադրատեսակների վաճառք իրականացնողների համար՝ 2500,0 հազար դրամը (սահմանային չափը), ընդ որում, նշված չափը վերաբերում է հարկ վճարողի բոլոր կրպակների, տաղավարների և այլ վաճառատեղերի միջոցով իրականացվող գործունեությունից ստացված շրջանառության ընդհանուր գումարին.

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածով սահմանվում է ապրանքաշրջանառության սահմանային չափ առևտրի իրականացման վայրերում խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնող՝ հաստատագրված վճարով աշխատող հարկ վճարողների համար, այսինքն եռամսյակի ընթացքում մեկ քառակուսի մետր առևտրային տարածքի վրա բաժին ընկնող գումարի առավելագույն չափը, որը գերազանցելու դեպքում հարկատուն դուրս է գալիս հաստատագրված հարկման դաշտից հարկման ընդհանուր դաշտ (ԱԱՀ և/կամ շահութահարկ/եկամտահարկ): Նշենք որ սույն հոդվածով առանձնացվում է սահմանային երկու չափ. ոսկերչական արտադրատեսակներ վաճառողների համար և այլ ապրանքներ վաճառողների համար:

### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հողված 4. Օրենքի 25՝-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետում «1200,0» թիվը փոխարինել «2100,0» թվով, իսկ «2500,0» թիվը՝ «14600,0-ով»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս փոփոխությամբ բարձրացվեց սահմանային չափը վերոհիշյալ գործունեության տեսակի համար: Այսինքն այժմ հաստատագրված վճարով աշխատող հարկատուները (ընդ որում և՛ ոսկերչական արտադրատեսակներ վաճառողները, և՛ այլ ապրանքներ վաճառողները) կարող են շարունակել մնալ այդ հարկման դաշտում ավելի մեծ իրացման շրջանառության դեպքում:

### Օրինակներ

Անհատ ձեռնարկատերը զբաղվում է ոսկերչական արտադրատեսակների վաճառքով: 2008 թվականի առաջին եռամսյակում 1 քառակուսի մետր առևտրական տարածք զբաղեցնող նրա կրպակի միջոցով իրականացված ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը կազմել է 3.5 մլն դրամ: Այս դեպքում տվյալ անհատ ձեռնարկատերը գերազանցել է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25՝-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված սահմանային չափը (1 քառակուսի մետր առևտրական տարածքի համար 2500 հազար դրամ): Ուստի, 2008 թվականի առաջին եռամսյակում տվյալ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը պետք է հարկվի ավելացված արժեքի հարկով և (կամ) եկամտահարկով:

Եթե տվյալ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը 2009 թվականի առաջին եռամսյակում բնութագրվի 2008 թվականի առաջին եռամսյակի նույն ցուցանիշներով, ապա «Հաստատագրված վճարների մասին օրենքում» օրենսդրական փոփոխությունների չկատարման պարագայում տվյալ անհատ ձեռնարկատերը կգերազանցեր հաստատագրված վճար վճարող համարվելու համար նախատեսված սահմանային շեմը և հետևաբար, կտևափոխվեր հարկման ընդհանուր դաշտ: Բայց քանի որ նրա ընդհանուր տարեկան ապրանքաշրջանառությունը ( $4 \cdot 3.5 = 14$  մլն դրամ, ենթադրվում է, որ այն հավասարաչափ է բաշխված տարվա եռամսյակների միջև) չի գերազանցում ավելացված արժեքի հարկով չհարկվող նվազագույն շեմը ( $58.35$  մլն դրամ՝ հաշվի առնելով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները), տվյալ անհատ ձեռնարկատերը կվճարի միայն եկամտահարկ: Մինչդեռ կատարված փոփոխությունների արդյունքում տնտեսավարողները հաստատագրված վճար վճարող համարվելու համար նախատեսված նոր սահմանային շեմը ( $14600$  հազար դրամ) գերազանցելով՝ միաժամանակ կգերազանցեն նաև ավելացված արժեքի հարկով չհարկվող նվազագույն շեմը ( $14600 \cdot 4 = 58.4$  մլն, որն ավելին է, քանի չհարկվող շեմը  $58.35$  մլն դրամի չափով), և հետևաբար նրանց համար հաստատագրված վճար կփոխարինվի ավելացված արժեքի հարկով և (կամ) եկամտահարկով (շահութահարկով):



## ՀՈՂՎԱԾ 25<sup>2</sup>

### ՆԱԽԿԻՆՈՒՄ

Հողված 25<sup>2</sup>. Առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեության համար հաստատագրված վճարի չափը.

Առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեության համար հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 660-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հողվածով սահմանվում է առևտրի իրականացման վայրերում խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնող, հաստատագրված վճարով աշխատող, հարկատուների հաստատագրված վճարի հաշվարկման կարգը: Այն հավասար է ելակետային տվյալ(առևտրային տարածքի մակերես) X ուղղիչ գործակից X 660:



### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հողված 5. Օրենքի 25<sup>2</sup>-րդ հողվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հողված 25<sup>2</sup>. Առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեության համար հաստատագրված վճարի չափը

1. Առևտրի իրականացման վայրերում առևտրական գործունեության (բացառությամբ ոսկերչական արտադրատեսակների վաճառքի) համար հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 660-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:
2. Առևտրի իրականացման վայրերում ոսկերչական արտադրատեսակների վաճառքի համար հաստատագրված վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ ելակետային տվյալի և ուղղիչ գործակցի արտադրյալի 6600-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:»:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս փոփոխությամբ առանձնացվեց առևտրի իրականացման վայրերում խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնողների համար հաստատագրված վճարի հաշվարկման կարգը ոսկերչական արտադրատեսակներ վաճառողների համար և այլ ապրանքներ վաճառողների համար:

Նշենք որ այլ ապրանքներ վաճառողների համար մնաց նախորդ հաշվարկային մեծությունը՝ 660, իսկ ոսկերչական արտադրատեսակներ վաճառողների վաճառողների համար այն դարձավ 6600:

## Ուժի մեջ մտնելու

Հողված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հոկտեմբերի 1-ից:

2008 թվականի երրորդ եռամսյակի համար հաստատագրված վճար վճարողները սույն օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների դրույթների համաձայն կարող են կատարել համապատասխան վերահաշվարկներ:

